ՀՅԴ Պաշտօնաթերթ





# ԴՐՕՇԱԿ



Հայկարամ
Նահապետյան

## ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ





Հուլիս N07 (1622)

2010

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



# ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**
Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

**Խմբագրական**

Փոխում է բանակցային տրամաբանությունը 2

**Հարցազրույց**

Օսկան Ալղերը «Դրօշակ»-ի խմբագրատանը 4

**Տեսական**

Ազգային հասկացություններ 9

Համաշխարհային քաղաքակրթությունների
և հայության դերի շուրջ 13

**Տարածաշրջան**

Փանթուրքիզմի և փանթուրանիզմի թունդ ժառանգորդ՝
Ազգային շարժում կուսակցությունը 18

**Տեղեկանք**

ԱՄՆ-ի Կոնգրեսի «Սովորական սպառազինությունների
մատակարարումները զարգացող աշխարհի երկրներին
2001-2008թթ.» զեկույցը 27

**Մասունքներ**

Մի առասպելի անմեռ վկան 36

**Խմբագրի անկյուն**

Ալիևյան ժառանգական բլեֆը 41

**«Դրօշակ»-ը 100 տարի առաջ**

Լեհ սոցիալիստները «Դաշնակցութեան» մասին 44

**Նոր գրքեր**

«Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ
գործունեությունը» 46

**Պատկերասրահ**

Հարություն Կալենց 48



Digitized by ARF PR Office

# Փոխւում է բանակցային տրամաբանութիւնը

ՄԱԿ-ի Հաագայում գտնուող Արդարադատութեան միջազգային դատարանի հրապարակուած եզրակացութեամբ օրինական ճանաչուեց Կոսովոյի անկախութիւնը: Այս աննախադէպ եզրակացութիւնը՝ քաղաքական զանազան մեկնաբանութիւններով, թէեւ համարուեց բացառաբար Կոսովոյի կարգավիճակին առնչուող իւրայատուկ վճիռ, սակայն իրաւական հիմք հանդիսացաւ ու դեռ կը հանդիսանայ բազմաթիւ ազգային հարցերի լուծման համար:

Այս վճռի լոյսի տակ Արցախեան հիմնահարցի խաղաղ լուծման բանակցային գործընթացի որդեգրուած երեք սկզբունքները, անխուսափելիօրէն, ենթակայ են դառնում համատեղելիութեան մի նոր տրամաբանութեան:

Նախ սկսենք կոնֆլիկտների խաղաղ լուծման սկզբունքից, ինչը բազմիցս խախտւում է Ադրբեջանի կողմից եւ որի ոգուն, առհասարակ, համահունչ չեն պաշտօնական Բաքուի կեցուածքները: Յայտնի փաստերը ցոյց են տալիս, որ եթէ խաղաղ լուծման բանակցային հիմքում բացակայում են իրաւական մեխանիզմներն ու երաշխիքները, ապա բուն սկզբունքը ենթակայ է դառնում կողմերից մէկի քաղաքական կամայականութեանը: Արցախեան գործընթացին կապուած միջնորդ պետութիւնների վերջին յայտարարութիւնները նոյնպէս ցոյց են տալիս, որ խաղաղ լուծման սկզբունքի դէմ կատարուած գործնական քայլերը կամ հրապարակային արտայայտութիւնները ոչ միայն բացասական գնահատականների չեն արժանանում եւ ըստ արժանւոյն չեն դատապարտւում, այլեւ վերածւում են

յաւելեալ ճնշման յարուցիչների: Համոզուած ենք, որ բանակցային գործընթացում անհրաժեշտ է առաջնորդուել ոչ թէ քաղաքական, այլ իրաւականութեան ողջ տրամաբանութեամբ:

Միւսը՝ տարածքային ամբողջականութեան սկզբունքը իմաստաւորւում եւ իրաւական նշանակութիւն է ստանում միջպետական փոխյարաբերութիւնների համատեքստում: Առկայ բանակցային գործընթացում Հայաստանի Հանրապետութեանը որպէս կողմ ամրագրելով, տրամաբանօրէն, իմաստաւորւում է տարածքային ամբողջականութեան սկզբունքը, ինչն ի հարկէ չի համընկնում իրականութեանը եւ հարցի էութեանը: Իրականութիւնը այն է, որ Արցախի հարցը, սկզբից եւեթ, առընչուած է մնում Ադրբեջանի Հանրապետութեանը, հետեւաբար տարածքային ամբողջականութեան սկզբունքը այլեւս չպէտք է մեկնաբանուի այնպէս, ինչպէս մեկնաբանւում է ներկայիս: Տրամաբանօրէն ակնյայտ է, որ Հայաստանի Հանրապետութիւնը երբեւէ չի խախտել Ադրբեջանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը: Այս առումով պէտք է խստագոյնս հակազդել ադրբեջանական կողմի այն բոլոր յերիւրանքներին, թէ իբր ՀՀ զինուորական ուժերը իրենց տիրապետութեան տակ են պահում Ադրբեջանի տարածքների 20 կամ 25 տոկոսը: Այս հակազդեցութեան գործնական իմաստն էլ այն է, որ աստիճանաբար պէտք է բանակցային գործընթացում վերականգնել ԼՂՀ դիրքերը՝ որպէս բանակցող կողմ:

Իսկ գալով ազգերի ինքնորոշման սկզբունքին, պէտք է ասել, որ ներկայիս սխալ քաղաքական մեկնաբանմամբ, եթէ տարածքային ամբողջականութեան սկզբունքը, որպէս Հայաստան-Ադրբեջան միջպետական յարաբերութիւնների հարց, ԼՂՀ անկախութեան հարցի հարթութեան վրայ է դրւում, ապա նշանակում է ոտնահարւում է ինքնորոշման իրաւունքը: Այնինչ Կոսովոյի անկախութեան մասին վճիռը ապացուցեց, որ ինքնորոշման իրաւունքը, մեր դէպքում՝ ԼՂՀ անկախութեան որոշումը, անսակարկելի է եւ կախուած չէ որեւէ պետութեան կամեցողութիւնից: Կոսովոյի անկախութեան հարցին էլ, իհարկէ, եթէ խառնէին Ալբանիա-Սերբիա միջպետական յարաբերութիւններում արծարծուող տարածքային ամբողջականութեան սկզբունքը, ապա այդ հարցն էլ փակուղի կը մտնէր: ԼՂՀ անկախութեան պաշտօնական ճանաչման հարցին պէտք է տալ տրամաբանական նոր ձեւաչափ, որպէս հայ ազգի ինքնորոշման իրաւունք՝ Ադրբեջանից անկախանալու համար:

Ի հարկէ, բանակցային գործընթացի տրամաբանութիւնը փոխելու գործը բարդ է եւ յղի անկանխատեսելի հետեւանքներով: Սակայն մադրիդեան տրամաբանութիւնն էլ արդէն կորցրել է իր արդիւնաւէտութիւնը: Հետեւաբար անհրաժեշտ է մադրիդեան երեք առանձին սկզբունքները պահպանելով, մէջտեղ հանել այդ երեքի համատեղելիութեան նոր տրամաբանութիւն: Ադրբեջանը ցայժմ, մադրիդեան սկզբունքների որդեգրման ժամանակահատուածում, դիւանագիտական երկու խոշոր փորձ է կատարել բանակցային տրամաբանութիւնը եւ, ընդհանրապէս, մեխանիզմը փոխելու ուղղութեամբ՝ հարցը նախ ՄԱԿ-ի, ապա ԵՄ-ի տիրոյթներ փոխադրելով: Առաձգական դիւանագիտութեամբ, հայկական կողմն էլ ի վիճակի է նոր տրամաբանութեամբ օժտել բանակցային գործընթացը:

Յամենայն դէպս՝ ՄԱԿ-ի Հաագայում գտնուող Արդարադատութեան միջազգային դատարանի հրապարակուած եզրակացութիւնը այդ հնարաւորութիւնն ընձեռում է:

# Օսկան Ալպերը

«Դրօշակ»-ի
խմբագրատանը



*Կինոբեմադրիչ և սցենարիստ համշենահայ Օսկան Ալպերը ծնվել է Արտվինում (Խոփա), ավարտել Տրապիզոնի լիցեյը: 1992 թ. սովորել է Ստամբուլի համալսարանի բնագիտության ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում, իսկ 1996 թ.՝ ընդունվել Ստամբուլի համալսարանի գիտության պատմության բաժինը, որն ավարտել է 2003 թ.: 1996 թ. սկսած ասիստենտություն է արել այնպիսի տեղերում, ինչպիսիք են Միջագետքի մշակութային կենտրոնը, Նազըմ Հիքմեթի անվան մշակույթի տունը: 2000 թ. ասիստենտություն է արել տարբեր գեղարվեստական ֆիլմերում, այդ թվում՝ Յեշիմ Ուստաօղլուի նկարահանած ֆիլմերում: Բեմադրիչի առաջին ինքնուրույն ստեղծագործությունը «Մոմի»-ն է, որը համշենի բարբառով նկարահանված կարճամետրաժ ֆիլմ է, իսկ «Մելանխոլիան և ռապսոդիան Տոկիո քաղաքում» վավերագրական ֆիլմը նկարահանվել է Ճապոնիայում: Ռեժիսորի նկարահանած մեկ այլ փաստագրական ֆիլմ է «Մի գիտնականի հետ ճանապարհորդություն՝ ժամանակի մեջ»-ը:*

*«Աշուն»-ը այս բեմադրիչի առաջին լիամետրաժ ֆիլմն է, որ մրցանակների է արժանացել բազմաթիվ փառատոներում:*

*Հայկազուն Ալվրցյան* – Ինչո՞ւ դարձաք ռեժիսոր: Ի՞նչ հարց ունեիք լուծելու:

*Օսկան Ալպեր* - Սկզբում մասնագիտացել եմ ոչ թե կինեմատոգրաֆիայի, այլ՝ ֆիզիկայի մեջ: Միաժամանակ շատ հետաքրքրված էի գրականությամբ, համաշխարհային գրականությամբ, որոշ չափով էլ՝ գրաքննադատությամբ: Հետո նկատեցի, որ շատ չեմ տիրապետում գրելու արվեստին, քանի որ իմ մայրենի լեզուն եղել է համշենահայերենը. թուրքերենին ավելի ուշ եմ տիրապետել: Մտածեցի, որ այն, ինչ ուզում եմ ներկայացնել, ավելի լավ է ստացվում տեսողական ձևով: Թուրքիայում կա Յըլմազ Գյունեյ անունով կինոռեժիսոր, որի ֆիլմերը ցու-

ցադրվում էին պետական հեռուստատեսությամբ: Ցուցադրվում էին նաև հին եվրոպական և ռուսական ֆիլմեր: Դրանց շնորհիվ որոշ չափով ծանոթ էի համաշխարհային կինոյին: Նկատեցի, որ ինձ ավելի շատ դուր են գալիս ոչ թե ամերիկյան, այլ եվրոպական ու ռուսական ֆիլմերը: Կամաց-կամաց սկսեցի զբաղվել կինեմատոգրաֆիայով՝ միաժամանակ սովորելով պատմության բաժնում: Բայց և այնպես, պատմություն սովորելու տարիներին ավելի շատ հետաքրքրվում էի կինոյով: Հաճախեցի կինեմատոգրաֆիայի դասընթացներին: Հետո՝ 90-ականների վերջին, նկարահանեցի կարճամետրաժ մի ֆիլմ՝ «Մոմի»-ն, որը ցանկացա ներկայացնել Համշենի բարբառով, որովհետև այդ ֆիլմն առնչվում էր իմ մանկությանը, և քանի որ մանկության տարիներիս մենք խոսում էինք համշենահայերենով, ուզեցի այդ պատմությունը ներկայացնել իմ ծնողների խոսած լեզվով:

«Մոմի» ֆիլմի նկարահանումից հետո սկսեցի ասիստենտություն անել պրոֆեսիոնալ ռեժիսորների մոտ: Այնուհետև սկսեցի կամաց-կամաց գրել «Աշուն» ֆիլմի սցենարը: Երկու տարի հետո նկարահանեցի նաև «Աշուն»-ը: Այսինքն՝ ցանկացա զբաղվել կինեմատոգրաֆիայով, որպեսզի ներկայացնեմ իմ ներաշխարհը:



*Հայկազուն Ալվրցյան* - Ի՞նչ էիք ուզում գրել, որ չստացվեց:

*Օզկան Ալփեր* - Ըստ էության 90-ական թվականները Թուրքիայում նույնպես շատ աշխույժ տարիներ էին: Մի կողմից՝ աշխարհը փոխվում էր, մյուս կողմից էլ՝ Թուրքիան քաղաքական առումով շատ հետաքրքիր տեղ էր զբաղեցնում. այդ տարիներին ձախակողմյան լինելը իրականում մեծ հանցանք էր համարվում: Մեծ գրողներ, ռեժիսորներ, ձախ հոսանքներին հարող երիտասարդների մեծ մասը գտնվում էին բանտում: Որոշ չափով ես էլ էի այդ ընդդիմադիր երիտասարդների շարքում: Թերևս մի քիչ այդ պատճառով, որոշ չափով էլ՝ աշխարհը փոխելու ցանկությունից մղված, ինչպես նաև՝ թե՛ ներաշխարհս ներկայացնելու և թե՛ մեր երկիրը ավելի ժողովրդավար և ազատ դարձնելու նկատառումից ելնելով ընտրեցի ռեժիսորի մասնագիտությունը:

*Հայկազուն Ալվրցյան* - Համշենցի լինելուդ հանգամանքը այդ ընտրության հետ որևէ կապ ունե՞ր:

*Օզկան Ալփեր* - Այո, ուներ: Քանի որ Թուրքիան ավելի ազգայնական երկիր է, պետական կառույցները հիմնված են թուրքականության գաղափարախոսության վրա: Այդ իսկ պատճառով ընդդիմադիրների շարքերում, բնականաբար, ավելի շատ ընդգրկվում են այլ էթնիկական խմբերի անդամներ: Ըստ իս՝ մենք համշենահայերս, մեր տարբեր մշակույթի և ինքնության պատճառով, ավելի ընդդիմադիր կեցվածք ենք ընդունել, այսինքն՝ ավելի ձախական ենք: Թուրքիայում այնպիսի էթնիկական խմբեր, ինչպիսիք են քրդերը, համշենահայերը, հույները, գտնվում են առավել ընդդիմադիր շարքերում: Եթե պետությունը նման կեցվածք է ընդունում, բնականաբար այդ խմբերն էլ առավել ընդդիմադիր շարքերն են անցնում:

*Ռուբեն Հովսեփյան* - Պատմաբանների, գրողների, այսինքն՝ մտավորական խավի մեջ իրենց պատմությունը վերանայելու կամ մի քիչ ավելի ճիշտ մեկնաբանելու նկատելի շարժում կա: Կինոյում կա՞ նման բան, թե՞ չէ:

*Օզկան Ալփեր* - Եթե խոսքը Թուրքիայի պատմության մասին է, ապա պաշտոնական պատմագրությունը, հատկապես 80-ականների վերջերից և 90-ականների սկզբներից սկսած, ավելի շատ է հարցման ենթարկվում մտավորական խավի կողմից: Օրինակ՝ մի քուրդ ռեժիսոր, որը այժմ ապաստան է գտել Ֆրանսիայում, ավելի ճիշտ է ներկայացրել պատմությունը: Բացի այդ՝ վերջերս մարդիկ ավելի շատ են տեղեկացվում համացանցի միջոցով:

*Ռուբեն Հովսեփյան* - Արդյոք նման թեմաներով գեղարվեստական ֆիլմեր նկարահանվո՞ւմ են:

*Օզկան Ալփեր* - Գեղարվեստական ֆիլմեր չեն նկարահանվել, սակայն սկսել են ստեղծել վավերագրական ֆիլմեր՝ Հայոց ցեղասպանության, քրդական խնդրի և այլ նման թեմաներով: Կա ձախակողմյան դիրքորոշում ունեցող մի սցենարիստ, որը գնացել է Երուսաղեմ և փաստագրական նյութեր հավաքել՝ Հայոց ցեղասպանության թեմայով:

*Ռուբեն Հովսեփյան* - Ձեր կարծիքով թուրքական կինոն բա՞րձր մակարդակ ունի:

*Օզկան Ալփեր* - Մինչև 80-ա-

կանների հեղաշրջումը հիմնականում նկարահանվել են հասարակական թեմաներով ֆիլմեր: Չինվորական հեղաշրջումից հետո ավելի զգուշավոր դարձան: 80-ականներին նկարահանվում էին առավելապես անհատական, ոչ հասարակական թեմաներով ֆիլմեր, բայց վերջերս երիտասարդ սերունդն սկսել է վերադառնալ հասարակական թեմաներին:

*Ռուբեն Հովսեփյան* - Օրհան Փամուքի ստեղծագործությունների հիման վրա ֆիլմեր նկարահանվո՞ւմ են:

*Օսկան Ալպեր* - Առայժմ Փամուքն ինքը չի ցանկանում, որ իր գրքերի հիման վրա ֆիլմեր ստեղծվեն: Փամուքն իր վեպերում ուղղակի կերպով չի շոշափում քաղաքական թեմաներ, սակայն քանի որ Փամուքը շատ ճանաչված գրող է, իր հարցազրույցներում երբեմն քաղաքականությանն առնչվող բավականին բացահայտ բաներ է ասում: Օրինակ՝ երբ ասաց, որ եղել է Հայոց ցեղասպանություն, բավականին մեծ աղմուկ հանեց:

*Ռուբեն Հովսեփյան* - Փամուքի գործերում նկատվում է չանտեսելու սկզբունքը: Օրինակ՝ Կարսում տեսնում է հայկական շենք, նշում է դրա հայկական լինելու հանգամանքը: Արդյո՞ք նման բան նկատվում է նաև կինոյում:

*Օսկան Ալպեր* - Կամաց-կամաց նման միտումներ նկատվում են: Օրինակ՝ ընկերներիցս մեկը ֆիլմ էր նկարահանել Քուրթուլուշի մասին: Այդ ֆիլմում կա նաև մի հայի կերպար: Հատկապես Հրանտ Դինքի քաղաքական սպանությունից հետո շատ բան փոխվեց: Այդ թաղումը մեծ ազ-



դեցություն ունեցավ. բավականին փոփոխություններ նկատվեցին: Իրականում թաղման արարողության բոլոր մասնակիցները չէ, որ հայ էին: Ասենք՝ նրանց կեսը կամ մեկ երրորդը թող հայ լինեն, բայց մնացածը թուրք էր: Թուրքիայում արդեն շատերը չեն ցանկանում հավատալ այդ ստերին: Այդ թաղման արարողության ժամանակ կարծես ժայթքեց այն ամենը, ինչ կուտակվել էր տարիներ շարունակ:

*Կարեն Խանլարյան* - Ձեր «Մոմի» ֆիլմը, չնայած հաջողված լինելուն, կարծես թե միջազգային բեմի վրա շատ չարծարծվեց, սակայն Ձեր մյուս երկու ֆիլմերը, որոնք նկարահանել էիք Յեշիմ Ուստաօղլուի հետ մեկտեղ, բավականին մեծ աղմուկ հանեցին: Ձեր կարծիքով ի՞նչն էր դրա պատճառը: Նաև ուզում եմ հարցնել, թե Յեշիմ Ուստաօղլուն համշենահա՞յ է, թե՞ իսլամացած հույն:

*Օսկան Ալպեր* - Յեշիմ Ուստաօղլուն տրապիզոնցի է: «Մոմի» ֆիլմն ավելի սիրողական է եղել: Այն իմ առաջին ստեղծագործությունն է, կարճամետրաժ է և որոշ չափով սիրողական բնույթ է կրում: Ուստաօղլուի հետ աշխատել եմ, նրա ասիստենտն եմ եղել: Հունական ցեղասպանության մասին Տրապիզոնում նկարահանված ֆիլմը բավականին մեծ աղմուկ է հանել, քանի որ այդ թեմաներն առաջին անգամ էին արծարծվում: Ինչ վերաբերում է «Աշուն» ֆիլմին, այն դիտել է 250 հազար մարդ, և ավելի մեծ աղմուկ է հանել: Կարելի է ասել, որ թեև գրեթե իմ առաջին ֆիլմն էր, սակայն բավականին մեծ ճանաչում բերեց ինձ: «Աշուն» ֆիլմում օգտագործել եմ համշենահայերենը: Հանդիսատեսներն սկսեցին հետաքրքրվել, թե որտեղի՞ց է այն ծագել, և սկսեցին ավելի շատ խոսել համշենահայերենի մասին: Թեև «Մոմի» ֆիլմը շատ կարճ ու սիրողական ֆիլմ էր, սակայն 2001 թ.՝ այս ֆիլմի նկարահանումից հետո, Անվտանգության դատարանն սկսեց ինձ անհանգստացնել: «Աշունը» ավելի երկար ֆիլմ է, բայց առանձնապես հետապնդումներ չեղան, քանի որ հասկացան՝ ինչքան շատ են ճնշումներ լինում, այնքան մեծ աղմուկ է հանում տվյալ ֆիլմը:

*Կարեն Խանլարյան* - Յեշիմ Ուստաօղլուի «Նրանց կյանքը ուսերի վրա» վավերագրական ֆիլմում թեև համշենահայեր էին ներկայացված, սակայն կարծես նվիրված լիներ իսլամացած հույներին:

*Օսկան Ալպեր* - Այդ ֆիլմն իրականում մահմեդականացված հույների մասին է: Քանի որ ֆիլմի նկարահանումը Տրապիզոնում բավականին բարդ կլիներ՝ նկարահանվեց Համշենում. բոլոր տեսարանները համշենական են:

*Հայկազուն Ալվրցյան* - Ի՞նչ պատմություն է ընկած «Աշուն» ֆիլմի հիմքում և ի՞նչ նպատակով նկարահանեցիք այն:

*Օսկան Ալպեր* - «Աշուն» ֆիլմում տեղ է տրված նաև քաղաքական տեսակետների, սակայն ես, ի վերջո, արվեստի գործիչ եմ: Ես շատ եմ կարևորում տան թեման, սակայն տունն ինձ համար չի սահմանափակվում զուտ շինություն լինելով: Տունը մարմնավորում է անցյալի պատմությունը, մշակույթը, լեզուն... «Աշուն» ֆիլմում ներկայացվում է մի համշենցու պատմությունը, որը տասը տարի տևած բանտային կյանքից հետո վերադառնում է Խոփա՝ իր տուն: Նա իր մոր հետ խոսում է համշեներենով, հանգամանք, որը պետք է կարևորել: Նա մեռնելուց առաջ անում է երկու կարևոր բան. մաթեմատիկա է սովորեցնում իր ընկերոջ երեխային և վերանորոգում է պարկապզուկ երաժշտական գործիքը: Ի դեպ՝ նրան թաղում են հենց այդ գործիքի նվագակցությամբ: «Աշուն» ֆիլմի հիմքում իրական պատմություն է ընկած: Խոսքը իմ համալսարանական ընկերներից մեկի՝ Ջեմիլ Աքսուի մասին է, որը կալանավորված է եղել, նրան սպանում են գազով թունավորելու միջոցով:

*Ռուբեն Հովսեփյան* - Ֆիլմում ինչո՞ւ էին նրան բանտարկել:

*Օսկան Ալպեր* - 90-ական թվականների ընդդիմադիրներից էր:

*Հայկազուն Ալվրցյան* - Գիտենք, որ ֆիլմի հերոսի նախատիպը՝ Ջեմիլ Աքսուն, ողջ է և ապրում է Խոփայում: Դուք ի՞նչ նկատառումով ֆիլմում սպանեցիք գլխավոր հերոսին:

*Օսկան Ալպեր* - Ջեմիլ Աքսուն հացադուլ էր հայտարարել՝ ի նշան բողոքի, քանի որ բանտի պայմանները խիստ ծանր էին: Դա միևնույն ժամանակ խորհրդանշական էր. թեև գլխավոր հերոսը մահանում է, սակայն կյանք է տալիս պարկապզուկ երաժշտական գործիքին:

*Հայկազուն Ալվրցյան* - Ձեր թե՛ «Մոմի» և թե՛ «Աշուն» ֆիլմերում դրված է համշենցիների խնդիրը:

*Օսկան Ալպեր* - Գլոբալիզացիայի հետևանքով համշենական մշակույթն աստիճանաբար կորչում է: Այդ ֆիլմերը ես ստեղծում եմ, որպեսզի համշենական մշակույթը չանհետանա, քանի որ համշենական մշակույթը շատ հարազատ է նաև ինձ: Կինոն շատ մեծ հնարավորություններ է ընձեռում՝ որևէ բան մեծ թվով մարդկանց հասցնելու առումով: Այդ իսկ պատճառով հետզհետե ավելի շատ եմ ֆիլմեր նկարահանում, որպեսզի համշենական մշակույթը չոչնչանա և հասնի ավելի մեծ թվով մարդկանց: Եթե համշենական մշակույթն անհետանա, իմ տունն էլ կվերածվի ավերակի:

*Հայկազուն Ալվրցյան* - Կա՞ն այլ համշենցիներ, որոնք նույն գործն են անում:

*Օսկան Ալպեր* - Հիմնականում՝ երաժշտական խմբերը, անգամ ռոք խմբեր, որոնք երգում են Համշենի բարբառով: Կան այնպիսիք, ովքեր կատարում են ուսումնասիրություններ, գրում գրքեր, բառարաններ, հավաքում ժողովրդական երգեր, համշենական հեքիաթներ՝ թեկուզ և լատինատառ համշենահայերենով:

*Ռուբեն Հովսեփյան* - Հոգեկան, մշակութային կապ կա՞ արդյոք Թուրքիայի համշենահայության և ռուսաստանաբնակ համշենցիների միջև:

*Օսկան Ալպեր* - Այո՛, նման կապ կա: Կան նաև մարդիկ, ովքեր ազգականներ ունեն, օրինակ, Ղազախստանում:

*Ռուբեն Հովսեփյան* - Ինչպես Դուք նշեցիք, Համշենը Ձեզ համար տան պես է: Արդյո՞ք կա նման հավաքական գիտակցություն:

*Օսկան Ալպեր* - Կա և՝ շատ ուժեղ: Հակառակ դեպքում այսօր անհետացած կլինեինք: Եթե երկու համշենցի հանդիպում են իրար, հասկանում և զգում են միմյանց: Օրինակ՝ երբ մտնում ես որևէ խանութ և իմանում, որ վաճառողը նույնպես համշենցի է, այնպես ես զգում, կարծես ոչ թե նոր ես ծանոթացել այդ մարդու հետ, այլ հանդիպել ես հին ծանոթներիցդ մեկին: Այսինքն՝ գոյություն ունեն շատ ամուր հոգեկան կապեր:



*Հայկազուն Ալվրցյան* - Խոփայի համշենցիների և Աբխազիայի համշենցիների միջև նման կապ գոյություն ունի՞:

*Օսկան Ալթեր* - Թեև տեղյակ են միմյանց գոյության մասին, սակայն շփումները շատ չեն: Այնուամենայնիվ, այդ կողմեր գնացողները վերադառնալուց հետո պատմում են նրանց մասին:

*Ռուբեն Հովսեփյան* - Ձեր ֆիլմերը մինչև այդ կողմեր հասնո՞ւմ են:

*Օսկան Ալթեր* - Հավանաբար հասել է «Մոմի»-ն: Ռուսաստանից և այլ վայրերից խնդրել են իմ ֆիլմերը: «Աշուն»-ը մրցանակ է շահել նաև Երևանում: Աբխազիայում մի փոքր խառն է: Քանի որ ֆիլմերս ցուցադրվել են Գերմանիայում և Ռուսաստանում, կցանկանայի, որ դրանք ցուցադրվեին նաև Աբխազիայում:

*Ռուբեն Հովսեփյան* - «Երկիր մեդիա» հեռուստաալիքն արդեն սփռվում է նաև արբանյակային հեռարձակմամբ: Եթե հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրներ չկան, ապա կարող ենք Ձեր ֆիլմերը ցուցադրել նաև «Երկիր մեդիա» հեռուստաընկերության միջոցով:

*Օսկան Ալթեր* - Իմ ֆիլմերի հեղինակային իրավունքը պատկանում է մի գերմանական ընկերության: Ես այդ հարցը կքննարկեմ այդ ընկերության հետ: Թերևս, եթե խոսքը վերաբերեր միայն Հայաստանում ցուցադրվելուն, ապա կարիք չէր լինի այդ հարցը քննարկել, բայց քանի որ այդ ալիքը սփռվում է ողջ աշխարհով, ես կդիմեմ այդ ընկերությանը՝ հեղինակային իրավունքի հարցով: Կպարզեմ և կգրեմ Ձեզ:

*Կարեն Խանլարյան* - Ինչպիսի՞ն են ձեր հարաբերությունները բուն համշենցիների հետ:

*Օսկան Ալթեր* - Երիտասարդները ավելի շատ են իրար ճանաչում, հանդիպում, որովհետև երիտասարդները դիտել են իմ ֆիլմերը: Նրանք գրում են իմ ֆիլմերի մասին, հրապարակում իմ հարցազրույցները: Երիտասարդ սերունդն ավելի շատ է հարաբերություններ ստեղծում մեզ հետ, իսկ նախորդ սերունդը չի ցանկանում շատ խոսել այդ մասին: Երիտասարդներն են ավելի ակտիվ:

*Ռուբեն Հովսեփյան* - Դուք ճանաչո՞ւմ եք հայկական կինոն:

*Օսկան Ալթեր* - Ցավոք, հիմնականում տեղյակ ենք միայն Փարաջանովի ֆիլմերի մասին, քանի որ Թուրքիայում դիտել ենք միայն նրա ֆիլմերը: Բայց և այնպես, կամաց-կամաց սկսում ենք ճանաչել: Ես տպագրվում եմ կինեմատոգրաֆիային նվիրված մի ամսագրում, մտադիր եմ գրել նաև հայկական կինոյի մասին: Իհարկե, անհրաժեշտ է որոշ թարգմանություններ անել: Ես մի երիտասարդ ընկեր ունեմ, որն աշխատում է «Ակօս» շաբաթաթերթի խմբագրությունում, նա և՛ լրագրող է, և՛ կինոգործիչ: Մենք միասին որոշել ենք հայկական կինոյի պատմության մասին հոդված թարգմանել և հրապարակել:

*Կարեն Խանլարյան* - Թուրքիայում եղել են հայ ռեժիսորներ, օրինակ՝ Քենան Փարսը: Հիմա կա՞ն նման հայեր:

*Օսկան Ալթեր* - Քենան Փարսը ավելի շուտ դերասան է, որը խաղացել է հին թուրքական ֆիլմերում: Ինչպես հայտնի է, հիմնվել է Թուրքիա-Հայաստան կինոյի պլատֆորմը: Ես էլ եմ ընդգրկված այդ պլատֆորմում, ընդգրկված է նաև մի հայ աղջիկ: Կամաց-կամաց համագործակցում ենք իրար հետ: Կա մեկ այլ կինոգործիչ, որը սցենարներ է գրել. նրան էլ ենք աջակցում: Նոր ֆիլմս, որ դեռ պետք է նկարահանեմ, առաջին անգամ հնչելու է հայերենը (ոչ միայն Համշենի բարբառը):

*Հայկազուն Ալվրցյան* - Կա՞ մի բան, որ մեր զրույցի ընթացքում չհարցրեցինք, բայց դու կցանկանայիր ասել:

*Օսկան Ալթեր* - Ըստ էության, այն, ինչ չեմ ասում, ներկայացնում եմ իմ ֆիլմերի միջոցով: Միշտ էլ հենց դա է:

*Ռուբեն Հովսեփյան* - Երբ մանուկ Կոմիտասին բերում են Էջմիածին, որտեղ պիտի ուսում ստանա ճեմարանում, նրան ընդունում է կաթողիկոսը: Այն ժամանակ Կոմիտասը հայերեն բառ իսկ չգիտեր: Սկսում է երգել թուրքերենով: Կաթողիկոսը ցնցվում է: Առաջին անգամ էր հայկական եկեղեցում թուրքերեն հնչում: Սրբապղծության նման մի բան էր հայկական եկեղեցում թուրքերեն երգելը: Կաթողիկոսը փաթաթվում է մանուկ Կոմիտասին և արտասվում ու ընդունում ճեմարան: Հիմա Ձեր՝ այստեղ թուրքերեն խոսելը շատ նմանություն ունի այդ դեպքին. «Դրօշակ» ամսագրի խմբագրությունում թուրքերեն է խոսվում...

# Ազգային հասկացություններ

Կարեն Խանլարյան

Հայ իրականության մեջ, հատկապես տեսաբանական բնագավառում, լուրջ շփոթ կա «ազգային շահ», «ազգային նպատակ», «ազգային ռազմավարություն» և նման հասկացությունների շուրջ: Հստակեցում և մտապատկերացումների ընդհանրություն ստեղծելու նպատակով, սույն ուսումնասիրությունը նախնական փորձ է մտքերի լայն փոխանակումներ և քննարկումներ ծավալելու համար:

Նախ ուզում ենք ուշադրություն հրավիրել Ազգային արժեք, Ազգային շահ, Ազգային հիմնանպատակ, Ազգային քաղաքականություն և Ազգային ռազմավարություն կատեգորիաների վրա, որոնց աստիճանակարգը նկարագրված է հետևյալ սխեմայով.




## Ազգային արժեք

Իրենց եղելության և լինելիության համար ազգերն ունեն հավատամքների, համոզումների, հոգեմտավոր սկզբունքների և գաղափարների սեփական ամբողջությունը, համակարգը, որը ձգվում է հիշողության և պատմության մեջ: Առանց ազգային արժեքների ազգերը չեն գոյատևում ու չեն զարգանում: Որքան հին են ազգերը, այնքան նրանց ազգային արժեքները ունենում են յուրահատուկ բնույթ: Նորերի համար ազգային արժեքները առավել ընդհանրական են լինում և ընդօրինակված: «ԱՄՆ-ի ազգային արժեքները,- գրում են ԱՄՆ-ի բանակի Ռազմական քոլեջի մասնագետները,- կազմում են մեր համակարգի շարունակականության լեգալ, փիլիսոփայական և բարոյական հիմքը: Այս արժեքները ապահովում են ազգային նպատակի մեր գիտակցումը: Դրանք կարող եք գտնել ազգի հիմնադիր փաստաթղթերում, ինչպիսիք են Անկախության հռչակագիրը և Սահմանադրությունը: Արժեքները արտահայտված են նախագահական հայտարարություններում, ասենք՝ Մոնրոյի դոկտրինը և Էմանսիպացիայի պրոկլամացիան» (H. Richard Yarger and George F. Barber, “The U.S. Army War College Methodology for Determining Interests and Levels of Intensity”, U.S. Army War College, Carlisle Barracks, Carlisle, PA, 1997. Adapted from Department of National Security and Strategy, Directive Course 2: “War, National Policy & Strategy”, Carlisle, PA: U.S. Army War College, 1997, p. 119): Ազգային արժեքները ազգային շահերի զարգացման հիմքն են հանդիսանում, հետևաբար պետական ստրատեգները պետք է գերազանց տիրապետեն ազգային արժեքներին:

## Ազգային շահ

Ինչպես անհատները, ազգերը ևս, որպես հավաքական անհատականություններ, իրենց շահերն ունեն՝ հիմնված սեփական արժեքների վրա: Ազգային շահերը ազգերին մղում են տարաբնույթ գործողությունների և ներկայացնում են ազգի գիտակցված կարիքներն ու ձգտումները համաշխարհային փոխհարաբերություններում: Յուրա-

քանչյուր ազգի ազգային շահերը վճռորոշ դեր ունեն աշխարհում նրա ներգրավվածության գործում: Դրանք պայմանավորում են տվյալ ազգի դերակատարությունը և արտահայտում նրա անվըտանգության հիմնախնդիրների լուծման սկզբնակետը:

## Ազգային հիմնանպատակ

Ապագայի հետ կապված ազգի պատկերացումների և հեռանկարների ամբողջությունը համարվում է ազգային հիմնանպատակ: Ազգային հիմնանպատակների ընդհանուր շրջագծում բնորոշվում և սահմանվում են ազգի գոյատևման և զարգացման գաղափարներն ու թիրախները: Դրանք ձևավորվում են միջավայրի, տարածաշրջանի պայմանների և աշխարհաքաղաքական դիրքի, տնտեսատեխնոլոգիական հնարավորությունների, քաղաքական կայունության աստիճանի և, իհարկե, գաղափարախոսության, առանձնահատկությունների և որոշակի գործոնների հիման վրա: Ազգային շահերն ապահովելու նպատակով ազգային քաղաքական ղեկավարությունը սահմանում և որդեգրում է ազգային հիմնանպատակները՝ ազգային քաղաքականության ձևավորումն ուղղորդելու համար: Առհասարակ ազգային հիմնանպատակների ընդհանուր շրջագծում են ներառվում նաև ազգի սոցիալական բարօրությանը առնչվող խնդիրները:

## Ազգային քաղաքականություն

Ազգային քաղաքականությունը պետության կողմից մշակված գործողությունների և խնդիրների լուծումների մի լայն դաշտ է՝ ազգային մակարդակով ազգային հիմնանպատակներ հետապնդելու համար: Ազգային քաղաքականության էատարրերը կարելի է գտնել պետական տարբեր փաստաթղթերում և ազգային ու պետական այրերի ու գործիչների աշխատություններում, բանավոր և գրավոր ելույթներում:

Ազգային քաղաքականությունը գործադիր իրավասու մարմինների կողմից մեկնաբանվում, հարմարեցվում և կիրառվում է պետական գործունեության տարբեր ոլորտներում: Ազգային քաղաքականության մնայուն ձգտումն է՝ ազգային և պետական ուժի կուտակումը, պահպանումը, ընդարձակումն ու ցուցադրումը:

## Ազգային ռազմավարություն

Ազգային ռազմավարությունը ազգային շահի, հիմնանպատակների և քաղաքականության ուղղությամբ ազգային և պետական կուտակված ուժի, հնարավորությունների և կարելիությունների արդյունավետ օգտագործման արվեստն ու գիտությունն է: Այն հաճախ կոչվում է նաև «Մեծ ռազմավարություն»: Ազգային ռազմավարությունը հիմնականում բխում է ազգային քաղաքականությունից, սահմանվում ու մշակվում է համապատասխան ժամկետներով և, FeedBack-ի (հատույց) սկզբունքով, վերանայվում, վերաձևավորվում է՝ ձեռք բերված արդյունքների լույսի տակ:

Ընդհանրապես ազգային ռազմավարությունը, ըստ տևողության, բնորոշվում է երեք մակարդակով. երկարատև, որը նախատեսվում է տասից քսան տարվա համար և ընդգրկում է ազգային շահերի համընդհանուր շրջագիծը, միջին տևողությամբ, որը նախատեսվում է հինգից տասը տարվա համար և, գլխավորաբար, ուղղված է ազգային հիմնանպատակների իրագործմանը, և վերջապես կարճատև, որը նախատեսվում է մինչև հինգ տարվա համար և ծրագրվում է ազգային քաղաքականության կիրառման համար:

Ազգային ուժի ու կարելիությունների տարրերի ցանկը ընդարձակ է և ընդգրկում է բնական ու սոցիալական բազմաբնույթ որոշիչներ: Բնական որոշիչներն են՝ աշխարհագրությունը, բնակչությունը և բնական պաշարները: Սոցիալական որոշիչները՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, տեղեկատվական և տեղեկութաբանական տարրերը: Ուժի տարրերը, բնականաբար, համարվում են ռազմավարության կարողությունների հիմնական միջոցները:

Ստրատեգը պետք է հաշվի առնի ուժի տարբեր էլեմենտները և դրանց կիրառումը խնդիրները լուծելու գործում: Նա պարտավոր է մշտապես և ազգային ռազմավարության իրացման ամբողջ ընթացքում հաշվարկել, թե արդյոք ազգն ունի՞ բավարար կարողություններ (մարդուժ, նյութեղեն հնարավորություններ, ֆինանսներ և այլն) այդ խնդիրները լուծելու համար: Եթե կարողությունը չի բավում ռազմավարությունը ամբողջապես կամ մասնակի իրացնելու, ուրեմն ռազմավարական հարացույցը հավասարակշռված չէ: Feedback-ի արդյունքում, երբ ապացուցվի ռազմավարական հարացույցի անհավասարակշռվածությունը, ստրատեգը՝ կամ ամբողջապես վերագնահատում ու վերամշակում է ազգային ռազմավարությունը, կամ ճշտում հավանական ռիսկերի հնարավորությունը՝ դրանք ներառելով ընթացիկ ծրագրերում:

## Հայ իրականության մեջ

Մեզանում Հայրենիքի գաղափարը, լեզուն, մշակույթը, ավանդաբար, համարվել են ազգային արժեքներ: Սույն ազգային արժեքները, թերևս, չափազանց պարզ ու հստակ լինելու պատճառով, չեն ամրագրվել պետական փաստաթղթերում: Բացառություն են կազմում պետական լեզվի և դրոշի մասին ՀՀ սահմանադրության համապատասխան դրույթները: Հայրենիքի հասկացությունը, սակայն, դեռ մնում է խիստ անորոշ: Թեև այս հիմնարար արժեքի շուրջ վեճեր, բարեբախտաբար, քիչ են ծավալվում, այդուհանդերձ նորանկախ Հայաստանում անհրաժեշտ է նաև այս հասկացության ամրագրումը:




Մեր համոզմամբ «Միացյալ Հայաստան» հասկացությունը պետականորեն պետք է ամրագրել որպես ազգային հիմնարար արժեք: Այս առումով ուսանելի է Իռլանդիայի գործող սահմանադրությունը, որի 3-րդ հոդվածում ամրագրվում է, որ «**Իռլանդական ազգի ամուր կամքն է** ներդաշնակորեն և բարեկամաբար միավորել Իռլանդիա կղզու տարածքում ապրող բոլոր մարդկանց, իրենց ինքնության և սովորույթների այլևայլ դրսևորումներով, գիտակցելով, որ **Միացյալ Իռլանդիան** կարող է կազմվել միայն խաղաղ ճանապարհով՝ ժողովրդի մեծամասնության հավանությամբ, ժողովրդավարական կանոններով, կղզու երկու հատվածներում (ընդգծումները մերն են - Կ.Խ.)» (http://en.wikipedia.org/wiki/Articles2and3oftheConstitutionofIreland):

Ֆիզիկական և պատմա-իրավական Հայրենիքից զատ, անհրաժեշտ է ճշգրտել նաև ազգի ժողովրդագրական կազմը: Պետք է պետականորեն պատասխանել այն հիմնահարցին, թե էթնիկական, քաղաքական և աշխարհագրական ինչպիսի կատեգորիա է հայություն ասվածը: Եվրոմիության անդամ Իռլանդիայի գործող սահմանադրության մեջ, օրինակ, հարցի պատասխանը շատ հստակ է ձևակերպվել: Սահմանադրության 2-րդ հոդվածում ասվում է. «Իռլանդացի ազգի մաս լինելը յուրաքանչյուր անհատի կոչումն ու իրավունքն է, ով ծնվել է Իռլանդիա կղզում, ինչպես նաև նրա կղզիներում ու ծովային սահմաններում: Դա նաև կոչումն է բոլոր այն անձանց, ովքեր համաձայն օրենքի համարվում են Իռլանդիայի քաղաքացիներ: Բացի այդ, Իռլանդիան հատուկ հոգածություն է տածում սփյուռքում ապրող իռլանդական ծագում ունեցող բոլոր այն մարդկանց հանդեպ, ովքեր ընդունում են իրենց մշակութային ինքնությունն ու ժառանգությունը»: Այստեղ ազգային արժեքը ոչ միայն բնորոշվել է տարածքի սահմանմամբ և «հողի տեսությամբ», այլև ազգային պատկանելության հիմքում դրվել է ազգային գիտակցության գործոնը՝ որպես ազգային արժեք: Իսկ նույն տեղում զուգահեռաբար ձևակերպվել է ազգային շահի հասկացությունը՝ «հոգածություն տածել» բանաձևով, որն արդեն արտահայտում է իռլանդական պետության շահի և հետաքրքրության ընդհանուր շրջագիծը:

Իռլանդիայի սահմանադրության մեջ ազգային շահերի առավել ընդլայնված ըմբռնումներ էլ են տեղ գտել: 3-րդ հոդվածի երկրորդ մասում, սահմանելով իշխանությունների գործադիր և ֆունկցիոնալ իրավասությունները, ամրագրվում է նաև այն, որ «ազգային նպատակների» իրագործման համար իրավասու մարմինների որոշումներն ու պատասխանատվությունները «կարող են ուժի մեջ մտնել ու գործադրվել **կղզու ամբողջ** կամ **մասնակի** տարածքում (ընդգծումները մերն են - Կ.Խ.)»:



Ուսանելի կետ կա նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության 1949 թ. «Հիմնական օրենք»-ի նախաբանի մեջ, ուր նշված է ամբողջական Գերմանիայի լանդերների (նահանգներ) անու-

նը. «Վյուրտեմբերգ, Բավարիա, Բեռլին, Բրանդենբուրգ, Բրեմեն, Համբուրգ, Հեսսեն, Դաշտային Սաքսոնիա, Մեկլենբուրգ-Արևմտյան Պոմեռանիա, Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա, Ռեյնլանդ-Պֆալց, Սաարլանդ, Սաքսոնիա, Սաքսոնիա-Անհալտ, Շլեզվիգ-Հոլշտայն և Թյուրինգիա...» (http://germanhistorydocs.ghi-dc.org/ sub_document.-cfm?document_id=2858): Պետք է նշել, որ վերը նշված գերմանական լանդերներից հինգը (Բրանդենբուրգ, Մեկլենբուրգ-Արևմտյան Պոմեռանիա, Սաքսոնիա, Սաքսոնիա-Անհալտ և Թյուրինգիա), 1949 թ. դրությամբ, գտնվում էին Գերմանիայի Դաշնային Հանրապետության կազմից դուրս, սակայն այդ իրողությունը արգելք չէր հանդիսանում, որ գերմանական հայրենիքը ամբողջապես բնորոշվեր սահմանադրությամբ: Դեռ ավելին՝ նույն




«Հիմնական օրենք»-ում նշված են նաև «Արևմտյան Պոմեռանիա», «Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա» և «Շլեզվիգ-Հոլշտայն» անվանումները, որոնք, ըստ էության, հարևանների նկատմամբ պահանջատիրական կատեգորիան են պարունակում իրենց մեջ: Իսկ Գերմանիայի Դաշնային Հանրապետության 1956 թ. վերամշակված «Հիմնական օրենք»-ի նախաբանում ամրագրվել է հետևյալը. «Բովանդակ գերմանացի ժողովուրդը, ազատ ինքնորոշմամբ, ձգտում է հասնել Գերմանիայի ազատությանը և միասնականությանը»:

Հունաստանն էլ, Կ. Պոլսի պահանջատիրության արծարծման հարցում, իրավական յուրօրինակ «անմեղ» ձևակերպումներով է հանդես եկել իր գործող սահմանադրության մեջ: Սահմանադրության 3-րդ հոդվածի առաջին բաժնում նշված է. «Հունաստանի Ուղղափառ Եկեղեցին իրեն գլխավոր ճանաչելով Տեր Հիսուս Քրիստոսին, **անքակտելիորեն** միանում է Կոստանդնուպոլսի Քրիստոսի Մեծ Եկեղեցու վարդապետությանը... (ընդգծումը մերն է - Կ.Խ.)» (http://www.hri.org/-docs/syntagma/artcl25.html#P1): Սահմանադրությամբ Կ. Պոլսի նշումը, որն ի դեպ մշտապես բողոքի առարկա է դարձել և դառնում Թուրքիայի համար, իրականում հելլենների տևաբար հիշեցնող և պարտավորեցնող տարածքային պահանջ է, որը ոչնչով չի հակասում միջազգային իրավական, առավել ևս դրացիական նորմերին:

Ի՞նչն է խանգարում, որ մենք էլ պետականորեն ամրագրենք ազգային մեր արժեքները և դրանցից բխող ազգային հիմնադրույթներն ու շահերը: Արդյո՞ք հնարավոր չէ ՀՀ սահմանադրության մեջ ևս «Միացյալ Հայաստան»-ի մասին գաղափարներ արծարծել, իրավական համապատասխան հիմնավորմամբ:

Վերջին տարիներին արհեստական հակասություններ են դրսևորվում «ազգային»-ի և «պետական»-ի միջև: Հակասություններից մի քանիսը ի հայտ եկան «հայ-թուրքական» արձանագրությունների շուրջ ծավալված քննարկումներում: Օրինակ՝ պատմական հարցերի ուսումնասիրության հարցում հայկական կողմը չուներ ոչ մի սահմանափակում, այն դեպքում, երբ թուրքական կողմը մշտապես արգելափակում է 301 հոդվածը: Կամ՝ արձանագրություններում նշված «առկա սահմաններ»-ը պաշտոնապես ճանաչելու կամ չճանաչելու հարցում հայկական կողմը չուներ և տակավին չունի և ոչ մի սահմանադրական հիմք, այնինչ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը ցայժմ չի կորցրել իր իրավական ուժը: Հայ-թուրքական արձանագրությունների հանրային քննարկումների ժամանակ պարզվեց, որ դեռ շատ ավելի տարրական խնդիրների շուրջ են գոյանում սկզբունքային տարակարծություններ: Բազմիցս հնչեց «հոգևոր հայրենիք» հասկացությունը, որը ոչ մի աղերս չունի գիտական, իրավական և սահմանադրական սահմանումների հետ: Կամ հնչեց նույնիսկ ավելի հակագիտականը՝ «սրտի և հոգու հայրենիք» հռետորական հղացքը, որը նույնիսկ վիրավորանք է պատկառելի անցյալ ու արժանապատվություն ունեցող որևէ ազգի հասցեին:

Ո՞րն է վերջապէս հայոց հայրենիքը... Ո՞վ է հայը... Ի՞նչ է Սփյուռքը... Ո՞վ է Հայոց ցեղասպանության հարցի իրավական պահանջատերը... և այլն, և այլն:

Անկախ վերը նշված հակասությունների բուն բնույթից, կարծում ենք, որ ազգային արժեքների, ազգային հիմնադրույթների և հարակից այլ հասկացությունների պետականորեն բանաձևման և ամրագրման դեպքում, ինքնաբերաբար, չեն կարող հակասություններ առաջանալ «ազգային»-ի և «պետական»-ի միջև:

# Համաշխարհային քաղաքակրթությունների և հայության դերի շուրջ

*Արտակ Զարգարյան*

Քաղաքակրթություն (լատ. Civis - քաղաքային, քաղաքացիական, պետական) հասկացությունը ձևավորվել է XVIII դ. Արևմտյան Եվրոպայում: Ներկա փուլում այն դարձել է մարդկային հասարակության ինքնաճանաչման, բնության, հասարակության և մշակույթի հետ նրա ունեցած կապի և փոխհարաբերակցության կարևոր մի արժեհամակարգ:

Հին հույները և հռոմեացիները իրենց համարում էին առավել զարգացած և քաղաքակիրթ, քան այն բարբարոսական ցեղերը, որոնք չէին ապրում նրստակյաց կյանքով, չունեին էթնոմշակութային ու հասարակական-քաղաքական այն կարևոր արժեքները, որոնք ձևավորվել էին հին հունական և հռոմեական պետություններում: Այսպիսով, իրավամբ կարելի է նշել, որ քաղաք-պետությունների ի հայտ գալով, մարդկությունը թևակոխեց հոգևոր, մշակութային, քաղաքական և հասարակական զարգացման մի նոր փուլ, որտեղ նրանք սկսեցին ստեղծել քաղաքակրթական արժեքներ:

Քաղաքակրթությունը, որպես առանձին հասկացություն, ի հայտ եկավ XVIII դ. երկրորդ կեսին Արևմտյան Եվրոպայում, ֆրանսիական հեղափոխության նախօրեին: Ֆրանսիացի իմաստասերլուսավորիչներ Մոնտեսքյոյի, Վոլտերի, Տյուրգոյի և այլոց աշխատություններում քաղաքակրթությունը սահմանվել է որպես բարոյականության և արդարամտության սկզբունքների վրա հիմնված հասարակություն: Մորգանը և Էնգելսը քաղաքակրթությունը սահմանել են որպես բարբարոսությանը հաջորդած հասարակական զարգացման փուլ: Մարքսիստական պատմագրությունը այս հասկացությունը օգտագործել է պատմությունը դիալեկտիկական մատերիալիզմի տեսանկյունից փուլերի բաժանելու համար, այսինքն այս եզրույթը կիրառել է գոյաբանության շրջանակներում: Այս համատեքստում քաղաքակրթությունը սահմանվում է որպես հասարական-քաղաքական կացություն, ինչպես նաև հոգևոր զարգացման հայտանիշների համախմբում, որը մարդկային հասարակության զարգացման բարձր մակարդակով տարբերվում է նախնադարյան վիճակից:

Ներկայումս պատմագիտության մեջ գերիշխում է պատմության փուլաբաժանման քաղաքակրթական մոտեցումը, որի համաձայն՝ մարդկության





Օսվալդ Շպենգլեր



Առնոլդ Թոյնբի

անցած ուղին, իր սկզբնավորման պահից մինչև մեր օրերը, ստորաբաժանվում է երեք փուլերի.

1. **Միջարդյունաբերական**
   **(Հին և միջին դարեր),**
2. **Արդյունաբերական**
   **(XVII – XX դդ.),**
3. **Հետարդյունաբերական**
   **(XX դ. կեսերից մինչև մեր օրերը):**

Քաղաքակրթական մոտեցման հիմքում ընկած են համաշխարհային պատմության մեջ ընդհանուր զարգացման միտումները, քաղաքակրթական արժեքները, որոնք տվյալ պատմական ժամանակահատվածում բնորոշ են բոլոր երկրներին և ժողովուրդներին:

Գոյություն ունի տեխնածին քաղաքակրթություն հասկացությունը, որի ներքո անհրաժեշտ է հասկանալ այն հանրությունը կամ դրանց ամբողջությունը, որին բնորոշ են բնությունն ի շահ իրեն փոխակերպելու ձգտումը ու անհատական գործունության ազատությունը, ինչն էլ որոշում է անհատի հարաբերական անկախությունը սոցիալական խմբից: Այս քաղաքակրթությանը պատկանում են հիմնականում Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի պետությունները:

Ավանդական քաղաքակրթություն ասելով սովորաբար հասկացվում են հասարակությունները կամ դրանց ընդհանրությունը, որին բնորոշ է բնական գոյապայքարից կախվածության բարձր աստիճանը, ինչպես նաև անհատի ամուր կապը սոցիալական իր խմբի հետ: Նման քաղաքակրթության ներկայացուցիչներ են հանդիսանում իսլամի հիման վրա կառուցված հասարակությունները: Համաձայն մեկ այլ սահմանման, քաղաքակրթություն է սեփական ճակատագրի միասնականությունը ընդունող մարդկանց գերակա մեծամասնությունը: Քաղաքակրթության գաղափարը միասնական ճակատագրի գաղափարն է:

Որոշ փիլիսոփաներ քաղաքակրթություն ասելով հասկանում են մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող օրենքների, հոգևոր և բարոյական չափորոշիչների, գիտության, արվեստի և փիլիսոփայության կատարելագործումը, առաջընթացը: Դրան հակառակ, մի շարք պատմաբաններ համարում են, որ քաղաքակրթությունը հետընթաց շարժում է, զարգացման դադար ու անկում:




Գերմանացի փիլիսոփա Օսվալդ Շպենգլերը եվրոպական քաղաքակրթության վերաբերյալ իր հիմնական աշխատությունն անգամ անվանել է «Եվրոպայի մայրամուտը»: Իր հերթին Շպենգլերը գտնում էր, որ մարդկային հասարակությունը, իր հիմնավորումից մինչև մեր օրերը, ստեղծել է 10 քաղաքակրթություններ՝ Եգիպտական, Չինական, Ասորա-բաբելոնա-փյունիկյան, ալդական կամ հին սեմական, Հնդկական, Իրանական, Հրեական, Հունական, Հռոմեական, Նոր-սեմական կամ արաբական, Գերմանո-ռոմանական կամ եվրոպական:

Մեկ այլ խոշոր մտածող, անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբին իր «Պատմության հետազոտություններ» աշխատության մեջ կատարել է համաշխարհային քաղաքակրթության պատմության բազմակողմանի վերլուծություն: Թոյնբին կարծում էր, որ մարդկային հասարակությունը իր պատմության ընթացքում ստեղծել է 21 քաղաքակրթություններ, որոնցից ներկա փուլում մնացել են միայն վեցը: Քաղաքակրթությունների երկխոսությունն ու hակամարտությունները նա համարում էր բնական գործընթաց: Ավելի խոշոր քաղաքակրթությունները, ավելի փոքրերի հետ հարաբերվելիս, կլանել են նրանց, քանզի վերջիններս չեն կարողացել յուրացնել ավելի մեծ քաղաքակրթությունների կողմից ներմուծված արժեքները, միաժամանակ պահպանելով սեփական քաղաքակրթության միջուկը: Իսկ քաղաքակրթությունների բախումը նա բացատրում էր այն հանգամանքով, որ մարդկային էությանը բնորոշ է իշխելու, ավելի թույլերին ճնշելու, նոր տարածքներ զավթելու, սեփական գերիշխանությունը հաստատելու և գրավված երկրներին ու ժողովուրդներին սեփական արժեհամակարգը պարտադրելու երևույթը:

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Սեմուել Հանթինգտոնի կողմից 1993 թ. հրապարակվեց «Քաղաքակրթությունների բախումը» հոդվածը, որը հետագայում խմբագրվեց և հրատարակվեց որպես մենագրություն: Այդ մենագրության մեջ նա մարդկությունը բաժանում էր 9 հիմնական քաղաքակրթությունների: Ստորև ներկայացնում եմ արդի քաղաքակրթությունների քարտեզը՝ ըստ Հանթինգտոնի:

1. **Արևմտյան,**
2. **Ուղղափառ,**
3. **Իսլամական,**
4. **Աֆրիկյան,**
5. **Լատինա-ամերիկյան,**
6. **Չինական,**
7. **Հնդկական,**
8. **Բուդդիստական,**
9. **Ճապոնական,**
10. **Առանձնակի պետություններ և փոքր քաղաքակրթություններ:**

Գալով աֆրիկյան և լատինա-ամերիկյան քաղաքակրթություններին, Հանթինգտոնը դրանք հա-



Սեմուել Հանթինգտոն

մարում է դասական իմաստով դեռևս չկազմավորված կամ կազմավորման փուլում գտնվող քաղաքակրթություններ, որի հիմնական պատճառը հանդիսանում է այս տարածաշրջանների և նրանցում ապրող ազգերի, ժողովուրդների մասնատվածությունը: Այս երկու քաղաքակրթություններն ապագայում կարող են խաղալ կարևոր դեր միջազգային հարաբերությունների թատերաբեմում, եթե կարողանան միավորվել:

Հեղինակը բավական մեծ տեղ է տալիս կրոնին, որպես քաղաքակրթական արժեհամակարգ: Կրոնը, որպես ինքնուրույն հասկացություն և համակարգ, շատ ավելի բարձր է դասվում, քան ազգը և ժողովուրդը: Պատճառը պարզ է. եթե մարդը կարող է միաժամանակ լինել և՛ Եվրոպայի քաղաքացի, և՛ ազգությամբ պակիստանցի, ապա միաժամանակ չի կարող լինել և՛ կաթոլիկ, և՛ մուսուլման:

Հանթինգտոնը գտնում է, որ ապագայում քաղաքակրթությունների բախումը անխուսափելի է: Եթե բռնկվի երրորդ համաշխարհային պատերազմը, դա կլինի ոչ այլ ինչ, քան քաղաքակրթությունների պատերազմ: Հեղինակը նկատի ունի իսլամական և արևմտյան-քրիստոնեական քաղաքակրթությունների բախումը:

Միաժամանակ, հեղինակը մեծ տեղ է տալիս Արևմտյան քաղաքակրթությանը՝ ապագա աշխարհակարգի ձևավորման մեջ: Ըստ Հանթինգտոնի, ոչ Արևմտյան քաղաքակրթությունները պետք է ճշտեն և հստակեցնեն իրենց վերաբերմունքը Արևմուտքին, եթե ցանկանում են խուսափել բախումներից:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև մի շարք այլ երկրների պատմագիտական դպրոցների և հետազոտական ինստիտուտների դիրքորոշումները այս խնդրի կապակցությամբ: Սկանդինավյան պատմագրությունը համարում է, որ ուղղափառսլավոնական քաղաքակրթության մեջ Ռուսաստանը չի կարող ունենալ առանցքային դեր, քանզի Կիևյան Ռուսիայի ձևավորման գործում հիմնական դերակատարություն ունեցել են նորման իշխանները: Այսինքն, ռուս ժողովուրդը ի զորու չէր իր միջից ընտրել առաջնորդ, և այդ պատճառով նրանք հրավիրեցին նորման իշխան Ռյուրիկին՝ դառնալու իրենց առաջնորդը: Նորմանական ավելի զարգացած քաղաքակրթության կրողների շնորհիվ էր, որ ռուս ժողովուրդը կարողացավ ստեղծել պետականություն և քաղաքակրթություն:

Իրենց հերթին, հնդիկ պատմաբանները մերժում են արևմտաեվրոպական տեխնածին քաղաքակրթության գոյությունը: Նրանք գտնում են, որ գաղութային պատերազմների և նվաճումների արդյունքում արևմտաեվրոպական երկրները չնայած նվաճեցին քաղաքակրթական զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող Հեռավոր Արևելքի երկրները, սակայն ի զորու չէին հասկանալ և ընկալել այն հզոր քաղաքակրթական արժեհամակարգը, որի կրողներն էին Արևելքի երկրները: Այդ իսկ պատճառով, գաղութային երկրների բնական հարստությունների և բնակչության հարստահարման արդյունքում, Արևմտյան Եվրոպայում ձևավորվեց ոչ թե ինքնուրույն քաղաքակրթություն, այլ տեխնիկական հասարակություն, զուրկ հոգևոր և մշակութային հիմնարար արժեքներից, որոնք յուրաքանչյուր քաղաքակրթության անկյունաքարերն են:

Անդրադառնանք համաշխարհային քաղաքակրթության այս խառնարանի մեջ Հայաստանի և հայության տեղին ու դերին: Ա. Թոյնբին իր «Պատմության հետազոտություններ» աշխատության մեջ հայությանը բնութագրում է որպես լոկալ, ինքնուրույն քաղաքակրթության ներկայացուցիչ-

ներ: Հայկական քաղաքակրթությանը բնորոշ են ուրույն հոգևոր-մշակութային արժեքներ: Թվարկենք դրանցից մի քանիսը:

- Հայերի ծագումնաբանությունը և հայոց լեզվի ուրույն տեղը հնդեվրոպական ազգերի խմբում:

- Առաջինը քրիստոնեություն ընդունած պետության խորհրդի համատեքստում Հայ Առաքելական եկեղեցին ունի իր ուրույն ուղղվածությունը և տեղը քրիստոնեական աշխարհում:

- Հայկական մշակույթը ունի իր յուրահատկությունը հաստատող բոլոր հատկանիշները: Ինչպես հայտնի է, հայկական մշակույթն արտահանվել է և արտահանվում է տարբեր երկրներ:

Հայկական քաղաքակրթության առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ մենք գտնվում ենք Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում: Այս հանգամանքը սեփական կնիքն է թողել մեր ժողովրդի պատմության, մշակույթի և հոգեկերտվածքի վրա: Գտնվելով երկու աշխարհների սահմանագծին, մշտապես հանդիպանելով ժողովուրդների բախման ասպարեզ, իրադարձությունների զարգացման արդյունքում ներգրավվելով պատմության մեծագույն հորձանուտներում, Հայաստանի և հայության համար, ճակատագրի կամոք, վերապահված էր կատարել հաշտարարի դեր երկու տարբեր մշակույթների միջև` քրիստոնեական Արևմուտքի և այն մշակույթի, որը մեր օրերում ներկայանում է որպես մահմեդական Արևելք:

Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ստեղծել է բազմաթիվ քաղաքակրթական արժեքներ և դրանք փոխանցել հարևան երկրներին ու ժողովուրդներին, արտահանել է հեռավոր երկրներ: Այդ արժեքների թվարկումը կարելի է սկսել հենց անիվի գյուտից, որը անտարակուսորեն կապված է Հայկական լեռնաշխարհի հետ: Առաջին մետաղաձուլարանը, ցորենի և խաղողի մշակումը, ձիաբուծությունը և բազմաթիվ այլ երևույթներ կապված են հենց Հայկական լեռնաշխարհի հետ: Ավելին, եվրոպացի որոշ հայագետներ կարծում են, որ հայկական միջնադարյան հոգևոր-մշակութային վերածնունդը, որ սկսվեց եվրոպական վերածննդից մի քանի դար առաջ, իր անմիջական ազդեցությունն է ունեցել Եվրոպայի վրա:

Ցավ ի սիրտ, անհրաժեշտ է նշել, որ երկար տարիներ ինքնուրույն պետականության բացակայությունը իր բացասական ազդեցությունն է թողել ժողովրդի պատմության վրա: Ավանդական պատկերացումների համաձայն, հակամարտություններում և պատերազմներում պարտություն կրած պետությունները կամ ժողովուրդները համարվում են պատմությունից, քաղաքակրթական գործընթացից դուրս: Նրանց վերադարձը քաղաքակրթություն կապվում է պետական անկախության վերականգնման հետ:

Հայաստանը և հայությունը, շուրջ 600 տարի չունենալով ինքնուրույն պետականություն, հնարավորություն չեն ունեցել նաև պետական մակարդակով խթանելու այնպիսի քաղաքակրթական արժեքների ստեղծումը, ինչպիսին են` մշակույթը, արվեստը, գրականությունը, օրենքները և հանրային հարաբերությունները կարգավորող այլ չափորոշիչներ:

Պետական անկախության վերականգնմամբ, Հայաստանը վերադարձավ համաշխարհային պատմության թատերաբեմ: Սակայն, Հայաստանում չունենալով պետական համակարգի միջոցով սեփական չափորոշիչները կերտելու կարողություն, մենք ընդունում ենք օտար քաղաքակրթությունների թափոնները, լինեն դրանք եվրոպական, ռուսական և, որ ավելի ցավալի է, թուրքական: Դրանք շատ հաճախ չեն համապատասխանում մեր էթնոմշակութային հոգեկերտվածքին, ոչնչացնում են բարոյականության, ընտանիքի, ազնվության և ճշմարտության մասին դարերից եկող մեր պատկերացումները:

Այսօր դրված է մեր հայկական պետության և քաղաքակրթության գոյության հարցը: Անհրաժեշտ է օր առաջ գիտակցել ու կանխարգելել այն վտանգները, լինեն դրանք արտաքին թե ներքին, որոնք սպառնում են մեր պետության ու քաղաքակրթության գոյությանը: Բազմաթիվ փորձությունների միջով անցնելով, մենք ապացուցել ենք մեր կենսունակությունը որպես ժողովուրդ: Այսօր մեր պետության համար կարևոր և ռազմավարական խնդիրներից է կուլ չգնալ օտար քաղաքակրթությունների կողմից ներմուծվող արժեքներին, վերահմաստավորել նաև մեր անցած պատմական ուղին, կրթել ու դաստիարակել հայրենասեր և ազգանվեր սերունդ, որը կարող է իր ուսերին կրել բոլոր այս մարտահրավերները, և օգնել հայկական պետությանն իր ուրույն տեղը գտնելու 21-րդ դարում:

# ՓԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ԵՒ ՓԱՆԹՈՒՐԱՆԻԶՄԻ ԹՈՒՆԴ ԺԱՌԱՆԳՈՐԴ՝ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Աւօ Գաբրճեան

Լուսարձակի տակ առնելու համար Թուրքիոյ քաղաքական հոլովոյթը, անհրաժեշտ է ճանչնալ անոր կուսակցութիւններն ու անոնց գործընթացը: Ատելութենէ եւ վրէժխնդրութենէ հեռու ըլլալու միտումով, սակայն, որպէս պահանջատէր եւ փանթուրքիզմեան ծրագիրներու տեւական վտանգի մատնուած ժողովուրդ, հարկ է քաջ գիտնալ Թուրքիոյ մէջ եւ դուրսը գործող ազգայնամոլ եւ ցեղապաշտ Ազգայնական Շարժում կուսակցութիւնը (Մէ.Հէ.Փէ.), որ իր արժանավայել տեղը կը գրաւէ Թուրքիոյ առաջնա-



կարգ կուսակցութիւններուն շարքին: Այստեղ, անհրաժեշտ կը նկատենք անմիջապէս ըսել, որ ան իր գործունէութիւնը աշխուժօրէն ներթափանցած է Թուրքիոյ սահմաններէն դուրս նաեւ՝ թրքական հանրապետութիւններ, Եւրոպա, յատկապէս՝ Հոլանտա, Պելճիքա, Գերմանիա, իսլամական եւ արաբական կարգ մը երկիրներ, Միացեալ Նահանգներ եւ վերջապէս հոն, ուր թուրք կը գտնուի:

Սակայն անմիջապէս դիտել տանք, որ ազգայնամոլական տրամադրութիւնները եւ հակումները միշտ ալ լայն տարածում ու-




նեցած են թրքական հասարակութեան մէջ: Հետեւաբար, Օսմանեան կայսրութեան բռնի թրքացման քաղաքականութիւնը որդեգրուեցաւ նաեւ Թուրքիոյ Հանրապետութեան կողմէ:

Այս իսկ պատճառով է, որ Թուրքիոյ մէջ փանթուրքիզմի գաղափարախօսութիւնը կրողներու ու իրականացնողներու մէջ, առհասարակ, մեծ թիւ կը կազմեն քաղաքական գործիչները, պաշտօնեաները, «գիտնականները», մտաւորականները»:

Ազգայնական շարժում կուսակցութեան պարագան կը զատորոշուի թրքական միւս կուսակցութիւններէն, թէեւ ընդհանրապէս բոլորն ալ թուրքիզմ կը քարոզեն (բացառաբար քրտական եւ քանի մը կուսակցութիւններէ): Այս հիմնական ու կենսական նպատակով է, որ կ'ուզենք ակնարկ մը նետել եւ հակիրճ ձեւով ծանօթացնել փանթուրքիզմի թունդ ժառանգորդ, բազմաբեղուն աշխատանք ծաւալած վերոնշեալ կուսակցութեան՝ իր զանազան երեսներով:

Ազգայնական շարժում կուսակցութիւն (MHP, Մէ.Հէ.Փէ.՝ Միլլիյէթճի արէքէթ արթիսի), Թուրք ծայրայեղ աջակողմեան կուսակցութիւն մըն է, որուն հիմնադիրն է Ալփարսլան Թիւրքէշ՝ բուն անունով Հիւսէյն Ֆէյզուլլահ (Ali Arslan, Alparslan Turkes, 1917-1997):

Փանթուրքիզմի ծրագիրները եթէ անցեալին իրագործած էին բժիշկ Նազըմը, Էնվէրը եւ անոնց խմբակը՝ Թուրքիստան, Աֆղանիստան եւ կամ այլ տեղեր, ապա յետագային Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը, Րաուֆ Պէյը, Զիյա Կէօքալփը՝ Թուրքիա: Ասոնց բոլորին արիւնով տոգորուած, շաղախուած, ծնունդ պիտի առնէր Ալփարսլան Թիւրքէշը, որ պիտի գործէր աւելի մոլեռանդ ազգայնամոլութեամբ, ցեղապաշտութեամբ, այս անգամ ոչ թէ Թուրքիոյ սահմաններուն մէջ, այլ ո՛ւր որ Թուրք գոյութիւն ունէր:

Ազգայնական շարժում կուսակցութիւնը սկիզբ կ'առնէ զանազան հանգրուաններով, երբ Թիւրքէշ 1965-ին, երեք ուրիշ նախկին աքսորեալներու հետ միասին, մտաւ Հանրապետական գիւղացիական ազգայնական կուսակցութեան (CKMP) մէջ եւ ընդամէնը երկու ամսուան ընթացքին կրցաւ կուսակցութիւնը իր հակակշռին տակ առնել: Ան դարձաւ կուսակցութեան ղեկավարը եւ սկսաւ CKMP-ն ըստ իր հայեցողութեան կաղապարել:



Ազգայնական վերոյիշեալ կուսակցութիւնը թրքական իր քաղաքականութեան վերիվայրումներուն պատճառով անունը յաճախ փոփոխութեան ենթարկած է:

24-25 նոյեմբեր 1967-ին Հանրապետական գիւղացիական ազգայնական կուսակցութեան Համագումարին Ալփարսլան Թիւրքէշի հեղինակութեամբ ծանօթացուած է կարեւոր մէկ գիրք «Տոքուզ ըշըք» («Ինը ջահեր»): «Ինը ջահեր»ը վարդապետութիւն (ուսմունք) մըն է, որ կը բաղկանայ հետեւեալ սկզբունքներէ.

- «Միլլիյէթճիլիք» (Ազգայնականութիւն),
- «Իւլքիւճիւլիւք» (Իտէալիզմ),
- «Բարոյականութիւն» (Ահլաքճիլիք),
- «Իլիմճիլիք» (Գիտութիւնգիտականութիւն),
- «Թոփլումճուլուք» (Համայնականութիւն),
- «Քէօյճիւլիւք» (Գիւղացիութիւն),
- «Հիւրրիյէթճիլիք վէ շախսիյէթճիլիք» (Ազատութիւն եւ անհատականութիւն),
- «Կելիշմէճիլիք վէ հալքճիլիք» (Զարգացում եւ ժողովրդավարութիւն),
- «Էնտուստրճիլիք վէ թեքնիքճիլիք» (Արդիւնաբերութիւն եւ ճարտարարուեստ):

«Ինը ջահեր»ը գործունէութեան ինը կէտեր են կուսակցութեան համար եւ կը համարուի «իւլքիւճիւներ» ու (իտէալիստներ) ուղեցոյցը: Այդ ծրագիրը «իւլքիւճիւներու» կը ներշնչէ հայրենիքի, դրօշակի, մուսուլմանութեան, թուրքիզմի սէր, եւ այդտեղէն ալ սէր դէպի «Մեծ երազ»՝ «Մեծ Թուրան»:

8-9 փետրուար 1969-ին Հանրապետական գիւղացիական ազգայնական կուսակցութեան Մեծ Համագումարի ընթացքին ներկայացող ժողովի լիազօրներու զօրակցութիւնը վայելելով, կուսակցութիւնը կը վերանուանուի Ազգայնական շարժում կուսակցութիւն (Մէ.Հէ.Փէ.): Անոր անդին վարչական ժողովին կուսակցութեան զինանշան կ'որոշուի Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանէն «Երէք կիսալուսին» եւ նոյն նիստի ընթացքին Ազգայնական շարժում կուսակցութեան երիտասարդական թեւի զինանշանն ալ՝ «Կիսալուսինի մէջ գայլ»:

12 սեպտեմբեր 1980-ին Թուրքիոյ զինուորական պետական հարուածէն ետք, 16 հոկտեմբեր 1981-ին Մէ.Հէ.Փէ.-ն փակուեցաւ, եւ ամբողջ ինչքերուն ձեռք դրուեցաւ:

Հետեւաբար, Թուրքիոյ մէջ տիրեց քաղաքական անկայունութիւն, - փակուեցան բոլոր քաղաքական կուսակցութիւնները եւ կուսակցական ղեկավարներ եւ այլ խնդրայարոյց անձնաւորութիւններ բանտարկուեցան, քաղաքական արգելափակումի, տնային բանտարկութեան եւ այլ պատժական տնօրինումներու ենթարկուեցան:

Ազգայնական շարժում կուսակցութեան մօտ անձեր 7 յունիս 1983-ին հիմնեցին Պահպանողական կուսակցութիւնը (Մուհաֆազագար փարթի, Muhafazakâr Parti): Վերանշեալ կուսակցութիւնը 30 նոյեմբեր 1985-ին վերանուանուեցաւ Միլլիյէթճի չալըշմա փարթիսի (Ազգայնական գործի կուսակցութիւն, MÇP- Milliyetçi Çalisma Partisi):

6 սեպտեմբեր 1987-ին, Ալփարսլան Թիւրքէշի քաղաքական արգելափակման բեկանման որոշումէն անմիջապէս ետք, 4 հոկտեմբեր 1987-ին, Ազգայնական գործի կուսակցութիւնը Արտակարգ Համագումարին Թիւրքէշը ընտրեց կուսակցութեան համանախագահ: 27 դեկտեմբեր 1992-ին, 1979-ի պատգամաւորներով հաւաքուած Մէ.Հէ.Փէ.-ի ժողովականները, հակառակ կարգ մը խոչընդոտներու, կը լուծարեն Մէ.Հէ.Փէ.-ն:

24 յունուար 1993-ին, Միլլիյէթճի չալըշմա փարթիսին (Ազգայնական գործի կուսակցութիւն, MÇP- Milliyetçi Çalisma Partisi) կը գումարէ իր 4-րդ Համագումարը, որուն ընթացքին «Ա.Գ.Կ.» անունը կրկին անգամ կը վերանուանուի Մէ.Հէ.Փէ. (Ազգայնական շարժում կուսակցութիւն) եւ որպէս զինանշան՝ կրկին կ'որոշուի «Երէք կիսալուսին». այսպիսով՝ Ազգայնական շարժում կուսակցութիւնը կը վերածնի:

Կուսակցութեան նոր ծրագիրը կը հիմնաւորուի Թիւրքէշի գրած «Տոքուզ ըշըք»ի հիման վրայ: Հիմնական գաղափարախօսութիւնը կը կայանայ իսլամ կրօնքի կաղապարած թուրք ազգայնականութեան հակակայսերապաշտ եւ հակահամայնավարական սկզբունքներէ: Ըստ Ազգայնական շարժում կուսակցութեան, թուրքերու ազատութիւնը խորհրդանշող Գորշ գայլի նշանն ալ տեղ կը գտնէ կուսակցութեան բոլոր բնագաւառներէ ներս:

Ազգայնական շարժում կուսակցութեան ծրագրով, որպէս առաջին նպատակ է համարուած՝ Թուրք հաւաքականութեան ամէն մէկ անդամին իսլամ հաւատքի, բարոյականութեան եւ արժանապատուութեան, թուրք ազգայնականութեան տեսլականի իրագործումը: Ինչպէս նաեւ պարտք կը դրուի պետութեան վրայ նեցուկ կենալ. «Մեր պետութեան հիմնական պարտականութիւնն է մեր ազգութեան եւ ազգային մշակոյթին հիմնական շրջագի-

ծը կազմող հզօր իսլամ կրօնին յայտնի ճշմարտութիւնը ուսուցանելը եւ ուսուցանել տալը» (կուսակցութեան ծրագիր, 1988, էջ 14):

Ազգայնական շարժում կուսակցութեան դրօշակը՝ երեք հաւասար չափով ճերմակ կիսալուսիններ, որ կը նշանակէ՝ «Դրօշակ, Հայրենիք, Աստուած», որոնք զետեղուած են կարմիր դաշտի մը վրայ: Երեք կիսալուսիններու որպէս խոր իմաստ՝ կը բացատրուի հետեւեալը. «Այս դրօշակի երեք կիսալուսինները նախ եւ առաջ դարեր շարունակ Օսմանեան կայսրութեան սիմբոլը հանդիսացած են եւ փողփողած են ամէն ամրոցի ու բերդի վրայ: Իւրաքանչիւր կիսալուսինի մասին կարելի է մեծածաւալ գիրք գրել: Այդ երեք կիսալուսինները կը խորհրդանշեն Դրօշակ՝ Երկիր, Հայրենիք Ազգ, Աստուած՝ Հաւատք: Աստուած ինք ուզած է, որ թուրք ազգը ազատ ու անկախ ապրի»: Աստուած ներկայացնող կիսալուսինը, ըստ իրենց, կը նշանակէ «հաւատք»: Երկրորդ կիսալուսինը՝ «ազնուութիւն»: Երրորդը՝ «լաւ գործ»:

Արդ, այս դրօշակի յարաբերութեամբ Ազգայնական շարժում կուսակցութեան հիմնական նպատակներէն է թրքական հին կայսրութեան վերականգնումը: Բոլորիս ծանօթ է, որ ամէն քաղաքական շարժում կը սկսի երազով մը, իտէալով, տեսլականով մը:

Ազգայնական շարժում կուսակցութեան պաշտօնաթերթն է «Օրթատողու», որ հիմնուած է 3 մայիս 1972-ին Չէքի Սարաչօղլուի կողմէ: «Օրթատողու»ի բովանդակութեան մէջ զանազան նիւթերու կողքին յաճախ կը հանդիպինք Հայաստանի եւ հայ ժողովուրդի վերաբերող նիւթերու, ուր յօդուածագիրները, ըստ էութեան, կը խեղաթիւրեն պատմութիւնը, ապատեղեկատուութիւն կը տարածեն ու մանաւանդ կը վարկաբեկեն հայ ժողովուրդի առնչուող ամէն ինչ: Այստեղ շատ կարեւոր կը նկատենք յիշել Ազգայնական շարժում կուսակցութեան մէջ գործող քանի մը հայերէն մէկը՝ պոլսահայ պատմաբան-հրապարակագիր Լեւոն Փանոս Տապաղեանը (ծնեալ Պոլիս, 1933-ին), որ ոչ թէ կուսակցութեան թունդ անդամներէն է միայն, այլ նաեւ կուսակցութեան պաշտօնաթերթի յօդուածագիրներէն: Տապաղեան, Ալփարսլան Թիւրքէշի ցանկութեամբ, տարիներ շարունակ յօդուածներ գրած է «Օրթատողու»ի մէջ: Տապաղեանի խօսքերէն է՝ «Եւրոպական Միութիւնը կը դաստիարակէ թուրքերու թշնամի հայը»:

Ազգայնական շարժում կուսակցութիւնը թրքական ցեղը բարձրագոյնը, ազնուագոյնը կը համարէ: Այդ պատճառով ալ թուրքերը «ասիլ թիւրքլէրը» («ազնուացեղ թուրքեր») կոչումը կու տան իրենք իրենց, որոնք, ըստ իրենց, աշխարհի ամէնէն ազնիւ ազգն են եւ հետեւաբար՝ կոչուած են միւս ժողովուրդներուն վրայ իշխելու: Բոլոր թրքախօս ժողովուրդները՝ Կովկասէն մինչեւ Կեդրոնական Ասիա, պէտք է միաւորուին «Մեծ Թուրան» պետութեան մէջ: Նախկին խորհրդային հանրապետութիւնները, ինչպիսին են Ատրպէյճանն ու Ղազախստանը, նոյնիսկ Չեչենիան, պէտք է ընդգրկուին այս պետութեան մէջ:



Ազգայնական շարժում կուսակցութիւնը, իր ծրագիրին համաձայն, բաւական լիպերալ է կրօնի նկատմամբ: Ըստ անոր, «ամէն ոք ազատ է կրօնի մը հետեւելու կամ չհետեւելու: Ոչ ոք իրաւունք ունի հաւատքի պատճառով մէկ ուրիշը նեղել ու ճնշել»: Կրօնի մասին այս դիրքորոշումին հասնիլը պատմական ընթացք մը կ'անցնէ: Նախկին փանթուրքիստները խստաբարոյ մուսուլմաններ չէին: Անոնց համար ազգայնական գաղափարը՝ բոլոր թուրքերու միաւորումը պետութեան մը մէջ, առաջնակարգ կարեւորութիւն ունէր:

Կուսակցութեան կողքին կը գործէ երիտասարդական «Պոզքուրդ» («Գորշ գայլ») կազմակերպութիւնը, յետագային անուանափոխուեցաւ «Իւլքիւ օճաքլարը»ի: Իսկ «Իւլքիւճիւ(ներ)»ը (իտէալիստ), Գորշ գայլերը կը սիրեն իրենք զիրենք այդպէս անուանել:

Ազգայնական շարժում կուսակցութեան ղեկավարը՝ Ալփարսլան Թիւրքէշը, «Իւլքիւճիւներ»ու (իտէալիստներու) յորջորջումով կը կոչուի «Պաշպուղու», այսինքն՝ առաջնորդ, գլխաւոր, ոչ կանոնաւոր զինուորական խումբերու հրամանատար:

«Իւլքիւճիներ»ը իրենք զիրենք կը կոչէին «ազգային-իտէալիստներ»: 1944-ի մայիսին էր, որ դուրսի աշխարհը տեղեկացաւ այս շարժումի մասին: Այդ օր դատական ընթացք սկսաւ թուրք ազգայնականներու եւ փանթու-



ռանիստներու (թրքերէնով «Թուրանճի»), այսինքն՝ «Մեծ Թուրան» գաղափարի համակիրներուն դէմ: Դատուողներու մէջ էին շարժումի ղեկավար ու ոգեշնչող Հիւսէյն Նիհալ Աթսըզը եւ Թիւրքեշը: Անոնք կը մեղադրուէին ապօրինի կազմակերպութեան ստեղծմամբ, որու նպատակն էր կառավարութիւնը տապալել, ինչպէս նաեւ պետութեան դէմ գրգռութիւն ընելով ցեղապաշտութիւնը տարածել:

«Իւլքիւճիւներ»ու (իտէալիստներու) շարժումը հիմնաւորուած է «ազգի միասնականութիւնը եւ հայրենիքի ամբողջականութիւնը» պահպանելու համար մղուող պայքարին վրայ: «Ով որ այս գործը կը խանգարէ կամ այդ շարժման մէջ կասկածելի կը նկատուի, պէտք է անոր դէմ պայքարիլ»:

Ստորեւ կու տանք երիտասարդական բաժնի՝ «Իւլքիւճիւներ»ու (իտէալիստներու) երդումը.

### ԻՏԷԱԼԻՍՏԻ ԵՐԴՈՒՄԸ

Աստուծոյ, Ղուրանի,
Հայրենիքի, Դրօշակի,
Ազգի,
Զէնքի եւ «Պաշպուղու»ի
ԵՐԴՈՒՄ ԸԼԼԱՅ!
Նահատակներս, Հերոսներս վստահ թող ըլլան,
Որպէս ԻՏԷԱԼԻՍՏ ԹՈՒՐՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ,
Համայնավարութեան, դրամատիրութեան, ցեղապաշտութեան
Եւ ամէն տեսակ կայսերականութեան (իմպերիալիզմի) դէմ
Մեր պայքարը պիտի շարունակուի.
Մեր մարտնչումը մինչեւ վերջին զինուոր, վերջին շունչ, մինչեւ արեան վերջին կաթիլն է:
Մեր մարտերը, Ազգային Թուրքիոյ
Մինչեւ Թուրան է:
Պիտի չվերադառնանք,
Պիտի չվհատինք, պիտի չխյնանք,
Պիտի յաջողինք, պիտի յաջողինք,
Պիտի յաջողինք!
«ԱՍՏՈՒԱԾ ԹՈՒՐՔԸ ԹՈՂ ՊԱՇՏՊԱՆԷ ԵՒ ՀԶՕՐԱՑՆԷ»
*(թարգմ.՝ հեղինակի):*

Տեղին է նշել, որ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին, Էնվէր փաշայի կողմէ ստեղծուած էր երիտասարդական կազմակերպութիւն, որ նաեւ կը կոչուէր Գորշ գայլեր: Այժմ՝ Գորշ գայլեր կը կոչուին Ազգայնական շարժում կուսակցութեան բոլոր անդամները:

Ըստ Գորշ գայլերու՝ իւրաքանչիւր թուրք պէտք է պարծենայ իր ազգութեամբ, որովհետեւ «թուրք ժողովուրդը աշխարհի ամէնէն բարձր ժողովուրդն է»: Անոնց պատերը Հեռաւոր Արեւելքէն դէպի Անատոլու երբ եկած են, առաջնորդուած են Գորշ գայլերով: Այս իսկ պատճառով անոնց խորհրդանիշն է՝ գորշ գայլը:

Գորշ գայլերու բացատրութիւնը իրենց շարժումին նկատմամբ, հետեւեալ ձեւով կը մեկնաբանուի. ամբողջ թրքական աշխարհի համար անմեն խորհրդանիշ մըն է, ուր որ կ'ուզես գնա՝ Ղազախիստան, Ատրպէյճան, Թուրքմենիստան... Եւ կը տեսնես, թէ ինչպէս Գորշ գայլը ամենուր, իրենց գլխուն վրայ կը դնեն: Թրքալեզու հանրապետութիւններու պետական հաստատութիւններու պատերուն վրայ կարելի է տեսնել կախուած Գորշ գայլի նշանը:

Գորշ գայլերու տեսակէտը արաբներու նկատմամբ հիչ մը կարծր է, անոնցմէ ոմանք նոյ-

նիսկ կը վանեն արաբերէնը՝ որպէս Ղուրանի լեզու։

1980-ական թուականներուն «իւլքիւճիւներ»ը իրենց պեխը կերկարաձգէին մինչեւ կզակ՝ (առանց մօրուքի) զատորոշուելու համար ուրիշներէ։ Պեխի այդ ձեւը յատուկ էր միայն իրենց՝ Գորշ գայլերուն, այսպէս հաստատելու, որ կառչած կը մնան իրենց նախահայրերուն։ Սակայն յետագային կարգ մը «իւլքիւճիւներ» սկսան կարճեցնել զայն։

Գորշ գայլերը ունին ձեռքի բարեւ տալու յատուկ ձեւ, բռնելով դիմացինին ձեռքը եւ ճկոյթ մատը կը մտցնեն դիմացինին ճկոյթի արանքը։ Ցուցամատը ու միջնամատը ինքնաբերաբար կը ձգուին առաջ, բթամատները կը ցցուին վեր, իսկ մատնեմատով տակէն իրարու ձեռքերը պինդ կը պահեն։ Այդպէսով, երկու գայլերու գլուխները կը միախառնուին իրարու։

«Իւլքիւճիւներ»ը իրար կ'ողջունեն մէկը միւսին ճակատը շփելով իրարու ճակատին, մէյ մը աջ կողմէն, մէյ մը ձախ կողմէն։ Այսպէսով, կ'ուզեն ըսել, որ գլուխները կը միացնեն իրարու լաւ նպատակի համար։ Անոնց նշանաւոր լոզունգներէն է Հաճի Պեքտաշ Վելիի բանաստեղծութիւններէն «Պիր օլալըմ, իրի օլալըմ, տիրի օլալըմ» այսինքն՝ «Մէկ ըլլանք, մեծ ըլլանք, կենդանի՝ ողջ ըլլանք»։ Այս նախադասութիւնը կը համընկնի «Իւլքիւճիւներ»ու գաղափարախօսութեան, որովհետեւ անոնք, որպէս իսլամներ, կ'ուզեն միասնականութեամբ հսկայ եւ կենդանի՝ այսպէս կոչուած ազգ մը ըլլալ։ Թուրք գրողներու եւ քաղաքական գործիչներու իսկ խօսքով. «Թուրք մարդուն երէկուընէ այսօր փընտռած, կարիքը ունեցած իսկական բուն պատգամը այս է։ Հետեւաբար, Հաճի Պեքտաշ Վելին սիրողները այս պատգամին հետեւորդներն են, անոր հետ եւ միահամուռ ճամբուն կրօնի-ազգային գաղափարի կապուած մնալով ծառայողներ են»։

«Իւլքիւճիւներ»ը ունին յատուկ դասագիրք «Իւլքիւճիւէ նօթլար» (Ցուցմունքներ իտէալիստի համար), որուն հեղինակն է նոյնպէս «պաշպուղու»ն՝ Ալփարսլան Թիւրքէշը։ Անոնք կը սորվին ազգապաշտութիւն ու թրքապաշտութիւն։ Ազգապաշտ թուրքը «գերմարդ» մըն է, որ չ'ընդունիր երկու ազգի գոյութիւնը այս աշխարհի մէջ։

Գորշ գայլերու երիտասարդական բաժինը, որ կը կոչուի «Իւլքիւ օճաքլարի» եւ անոնք «Իւլքիւճիւ(ներ)», ունի Թուրքիոյ եւ արտերկրի մէջ կեդրոնատեղիներ, ակումբներ եւ թաքնուած են այլ անուններու տակ, օրինակ՝ մշակոյթի, ֆութպոլի եւ այլն, ստորեւ տրուած անունները քանի մը հատն են միայն այդ կեդրոններուն.

- «Իւլքիւ օճաքներու կեդրոնատեղի» (Ülkü Ocaklari Genel Merkezi),
- «Ալփարսլան Թիւրքէշ Իւլքիւ օճաքը» (Alparslan Türkes Ülkü Ocagi) AUGSBURG,
- «Քոճա Մուսթաֆա փաշա Իւլքիւ օճաքլարը» (Koca Mustafa Pasa Ülkü Ocaklari)։

Այս կեդրոններուն մէջ թուրք երիտասարդները կը խրախուսեն, որ տօնեն փանթուրքիստներու օրը։

Գորշ գայլերը կը պայքարին հայերու, ալեւիներու, քիւրտերու ու հրեաներու դէմ։ Թուրքիոյ մէջ յատկապէս 1970-1980-ական շրջանը կը յատկանշուի Գորշ գայլերու հակահայ արշաւանքով։

Կէս զինուորական այս կառոյցը, այդ շրջանին, բուռն գործունէութիւն ծաւալեց ինչպէս թուրք եւ քիւրտ այլախոհ տարրերու, այնպէս ալ Թուրքիոյ հայերու եւ սփիւռքահայութեան դէմ։ Մասնաւորապէս հայ ազատագրական շարժման զինեալ պայքարի 1975-1985 ժամանակաշրջանին։ Գորշ գայլերու կիրարկած թրքացման քարոզարշաւներու սպառնալիքին ներքեւ, Թուրքիոյ հայութիւնը ստիպուած՝ ինքզինք կը ներկայացնէր իբրեւ «քրիստոնեայ թուրք»՝ հայկական ծագումն ու պատկանելիութիւնը քաղաքական յանցանք նկատելով... Թերեւս թրքական պատկանելիութեան TIS (Turk-Islam-Sunni) բանաձեւի յօրինումն ու տարածումը կարելի է այս շրջանի արդիւնքը նկատել։

Հակահայ գործողութիւնները կատարող Գորշ գայլերը, ինչպէս Էօմէր Չէլիք, մինչեւ այսօր կը պարծենայ ու կը կրկնէ թէ «մենք պետական պարտականութիւն կատարեցինք»։

Գորշ գայլերը 1980-է առաջ առաւել դաժանութեամբ կը պատասխանէին՝ երկիրը փրկելու համար կոմունիստներէն։ Անոնց արմատները կու գային յիսունական թուականներէն ստեղծուած «Կոմունիզմի դէմ պայքարի միութիւն» էն։ Այս Միութիւնը՝ TK-MD - Թիւրքիէ Քոմունիզմէ Մուճատալէ Տերնէի (Համայնավարութեան դէմ պայքարի միութիւն), ունէր մասնաճիւղեր ամբողջ Թուրքիոյ տարածքին։ Այս միութիւնը կը պաշտպանէր Ալփարսլան Թիւրքէշը, երբ նախագահն էր Հանրապետական գիւղացիական ազգայնական կուսակցութեան։

Ազգայնական շարժում կուսակցութիւնը կը կազմակերպէ բանակումներ, որոնք տեղի կ'ունենան Թուրքիոյ մէջ, որոնց կը մասնակցին Թուրքիայէն եւ արտերկիրէն։ Հոն կը ստանան քաղաքական դաստիարակութիւն՝



Տեւլէթ Պահչելի

թուրք ժողովուրդի պատմութիւն եւ ինչպէս պայքարիլ քիւրտերու դէմ, որոնք «կ'ուզեն երկիրը երկու կտոր ընել»: Այնպէս կը սորվեցնեն, որ երբեք իրենց սորվածը չմոռնան:

1980-ին, Թուրքիոյ զինուորական պետական հարուածէն ետք բազմաթիւ Գորշ գայլեր գաղթեցին Եւրոպա եւ կազմակերպուեցան օգտագործելով մշակութային հաստատութիւններ, մարզական ակումբներ, որպէս հովանոց կազմակերպութիւններ: Այս կազմակերպութիւններու մեծ մասը արդէն գոյութիւն ունէր նախապէս, հետեւաբար կոմունիստական թշնամութիւնը՝ Սովետական Միութեան, Չինաստանի, Իրանի, Իրաքի, Յունաստանի, Կիպրոսի, Պուլկարիոյ մէջ թուրք փոքրամասնութիւնները մղեցին զօրակցելու: Կազմակերպչականօրէն փանթուրքիզմը Թուրքիոյ մէջ մնաց տկար եւ սահմանուած վերնախաւէն ներս:

Գորշ գայլերու առաջին կազմակերպութիւնը Հոլանտայի մէջ կը կոչուէր «Իւլքիւճիւ թիւրք իշճիլէր տերնէի» (Թուրք իտէալիստ բանուորական ընդհանուր միութիւն), անոր յաջորդեց՝ «Հոլանտա թիւրք տերնէկլերի ֆետերասիոնու» (Հոլանտայի թուրք միութիւններու ֆետերասիոն), հիմնադրուած է 22 սեպտեմբեր 1982-ին:

«Եւրոպայի թրքական ֆետերասիոն»ը այն օղակն է, որ իրարու կը կապէ Եւրոպայի տարբեր երկիրներու (Գերմանիա, Շուէտ, Աւստրիա, Պելճիքա, Անգլիա, Զուիցերիա, Դանիա, Հոլանտա եւ Ֆրանսա) թրքական ֆետերասիոնները: Եւրոպայէն դուրս գոյութիւն ունեն ֆետերասիոնի անդամ կազմակերպութիւններ, ինչպէս՝ Գանատայի, Միացեալ Նահանգներու, Սէուտական Արաբիոյ, Եգիպտոսի եւ Աւստրալիոյ մէջ: Այս բոլոր կազմակերպութիւններու «մայր կազմակերպութիւն»ն արդէն գոյութիւն ունէր 1970-ական թուականներու վերջերէն: Անոր լրիւ անունն է «Աւրուփա տեմոքրադիկ իւլքիւճիւ թիւրք տերնեքլերի ֆետերասիոնը» (§Avrupa Democratic Ülkücü Türk Dernegler Federasyoni», «Եւրոպայի թուրք դեմոկրատ-իտէալիստ միութիւններու դաշնակցութիւն»):

Գորշ գայլերու կիները իրենց առանձին դաշնութիւնը ունին, աշխարհի տարածքին, զանազան այլ անուններու տակ թաքնըուած:

Եւրոպայի մէջ այսօր թուրքերը կը ջանան «Եւրոպայի թուրք» կոչումը ստանալ, տարբերուելու համար «փոքրամասնութիւն» կոչումէն: Կան խումբեր, որոնք կը նախընտրեն իրենց «Եւրոպայի մուսուլմաններ» անուանումը: Ասոր դէմ են Ազգայնական շարժում կուսակցութեան Գորշ գայլերը, որովհետեւ անոնք նախ թուրք են եւ ապա՝ ուրիշ բան: Այս հարցը աւելի ամրապնդելու համար, թրքական պատկերասփիւռի կարգ մը կայաններ, օրինակ՝ «TGRT», «D», «Star» եւ այլ կա-

յաններ, տարիներու ընթացքին յատուկ յայտագիրներով հանդէս եկած են, ինչպէս՝ «Աւրուփա Թիւրքլէրը» (Եւրոպայի Թուրքեր) եւ այլ խորագիրներով:

Թրքական ֆետերասիոնի գործունէութեան ծրագրի մէջ, որպէս աշխատանք, ուրիշներու շարքին, նշուած է. «Ազգային համագումար՝ մայիս 4-ի եւ 5-ի իմաստը հոլանտացիներու համար» թեմայով: Մայիս 4-ը եւ 5-ը Հոլանտայի մէջ կը յիշատակուին որպէս Համաշխարհային Բ. Պատերազմի զոհուածներու ոգեկոչման օր:

Թրքական ֆետերասիոնի գործունէութեան ներքին ծրագիր-նախագիծը երբ քննենք, կը տեսնենք անոր մէջ, թէ «մայիս 3 եւ 4 «Թիւրքճիւլէր պայրամը»ն է, այսինքն՝ «թրքասէրներու տօն»ը, «փանթուրքիստներու տօնը»: Ան 1944 թուականի մայիս 3-ի տարեդարձն է, երբ 23 փանթուրքիստներ, ներառեալ Ալփարսլան Թիւրքէշը, դատի կանչուեցան:

Առ այդ, Գորշ գայլերը մայիս 3-ը կը շարունակեն տօնել որպէս փանթուրանիզմի, «Մեծ Թուրան»ի գաղափարի օր: Մայիս 3-ը անոնք կը տօնեն իրենց այն նպատակի վերահաստատման համար, որ Թուրքիան դարձնեն գերուժ մը եւ նոյնիսկ աշխարհի միակ տէրութիւնը:

1990-էն ի վեր, ամէն տարի օգոստոս ամսուան առաջին շաբաթը տեղի կ'ունենայ Ազգայնական շարժում կուսակցութեան վեհաժողովը՝ «Էրճիես յաղթանակի վեհաժողով» (Erciyes Zafer Kurultayi) անունով, որ կը գումարուի Կեսարիոյ (այժմ Քայսերի) շրջանի Էրճիես լերան հովիտը: Հոն կը հաւաքուին տասնեակ հազարներով «Իւլքիւճիւ(ներ)»՝ Ազգայնական շարժում կուսակցութեան անդամներ, աշխարհի չորս ծագերէն, յատկապէս Եւրոպայէն:

Վեհաժողովը փառատօնային բնոյթ ունի, ուր ներկայ կը գտնուին երգիչներ, պարախումբեր, օսմանեան փողերախումբը (Մեհթեր մարշեր երգող-նուագող)՝ օսմանեան դրօշակներով եւ այլն:

Արտերկրէն եկող «Իւլքիւճիւ(ներ)»ը անհամբեր կը սպասեն իրենց ղեկավարին ճառը լսելու, անորմով ոգեւորուելու, լիցքաւորուելու եւ գալիք օրերու գործունէութեան ուղեցոյցը ստանալու:

Ազգայնական շարժում կուսակցութիւնը ինքն է, որ ամէնէն աւելի կը պաշտպանէ արտասահման ապրող թուրքերու շահերը:

1990-ական թուականներուն Ազգայնական շարժում կուսակցութեան հիմնական պայքարը Չեչենիայի «թրքական հանրապետութեան ազատագրումն» էր:

1992-ին, կրկին անգամ ճեղք կը բացուի Գորշ գայլերու մէջ: Այս անգամ ան տեղի կ'ունենայ «Մայր հողի վրայ»: Ազգայնական շարժում կուսակցութիւնէն կ'անջատուի մրցակից խմբակ մը, Մուհսին Եազըճըօղլուի (Muhsin Yazicioglu, 1954-2009) ղեկավարութեամբ, որ կը կոչուի «Պէօյիւք պիրլիք փարթիսի» (Մեծ միասնութիւն կուսակցութիւն, BBP- Büyük Birlik Partisi): Նշենք, որ Եազըճըօղլուն 25 մարտ 2009-ին ուղղաթիռի արկածի պատճառով մահացաւ:

Մեծ միասնութիւն կուսակցութիւնը բնականաբար եւս կը դաւանի փանթուրքիստական գաղափարախօսութեան, իսկ անոր երիտասարդական թեւը աշխոյժ ձեւով կ'աշխատի այդ ուղղութեամբ: Բաւական է նշել, որ Հրանդ Տինքը սպաննող Օկուն Սամասթը եւ այդ գործով անցնող Եասին Հայալը եղած են յիշեալ կուսակցութեան երիտասարդական թեւի անդամներ:

Մեծ միասնութիւն կուսակցութիւնը Եւրոպայի մէջ ունի իր մասնաճիւղերը, որ թրքական ֆետերասիոնի մրցակիցը կը համարուի եւ կը կոչուի «Աւրուփա նիզամի ալեմ ֆետերասիոնու» (Եւրոպայի համաշխարհային կամ միջազգային կարգի դաշնութիւն):

1997-ին Ալփարսլան Թիւրքէշի մահէն ետք կուսակցութեան ղեկավար կ'ընտրուի դոկտ. Տեւլէթ Պահչելին: Պահչելին ծնած է 1948-ին՝ Օսմանիէ նահանգը եւ իր պատանի տարիքէն յարած է «Իւլքիւճիւ» գաղափարներուն: 1967-ին ան հիմնած է Ազգայնական շարժում կուսակցութեան երիտասարդական բաժին «Իւլքիւ օճաքլարը» (իտէալիստներու օճախ):

Գորշ գայլերը Թուրքիոյ ալեւիներու համայնքին արիւնալի դէպքերու առիթ տուած են: Այդ արիւնահեղութեան գագաթնակէտը «Գահրաման-Մարաշ»ի (Գերմանիկ-Վասպուրականի) 1978-ի դեկտեմբեր 4-ի կոտորածն էր, որու ընթացքին տասնեակ ալեւիներ զոհուեցան: Այս արեան հեղեղներուն կասկածելիներու ցանկին մէջն էին Ազգայնական շարժում կուսակցութեան բարձր ղեկավարները:

Ազգայնական շարժում կուսակցութիւնը Թուրքիոյ հայ փոքրամասնութիւնը կ'անուանէ «հայ ստրուկներ»:

Հայոց ցեղասպանութեան մասին պատրաստուած Աթոմ Էկոյեանի «Արարատ» ֆիլմը, որ 2004-ին պիտի ներկայացուէր Թուրքիոյ շարժասրահներու մէջ, հակառակ անոր որ կառավարութիւնը արտօնութիւն տուած էր, սակայն թուրք ժողովուրդի աչքը թեքած էր դէպի Ազգայնական շար-

ժում կուսակցութեան կուսակցապետ Տեւլէթ Պահչելիին, որի պատասխանը «ոչ» էր:

Շրջան մը Ազգայնական շարժում կուսակցութեան պայքարի կարգախօս դարձած էր թուրք երգիչ Մուսթաֆա Եըլտըզտողանի «Թիւրքիյէմ» (Իմ Թուրքիաս) երգի համարներէն՝ «Թուրքիան կամ սիրէ, կամ լքէ՛, հեռացի՛ր»: Տեղին է յիշել, որ վերոյիշեալ կարգախօսը վերջերս յանկարծակի փակցուած տեսնուեցաւ Հրանդ Տինքը սպաննող պատանին փոխադրող ինքնաշարժին վրայ: Մամլոյ գործակալներ, երբ կռահեցին կարգախօսը, անմիջապէս ոստիկանութիւնը կտոր մը թուղթով ծածկեց զայն:

Միւս կողմէ երգիչ Օզան Արիֆ կը հանդիսանայ Գորշ գայլերու անզուգական մեկնաբանը, Ազգայնական շարժում կուսակցութեան գաղափարախօսութիւնը երգերու միջոցով տարածողներէն մէկը, հետեւաբար՝ Ազգայնական շարժում կուսակցութեան շարքայիններն ու համակիրները ընդհանրապէս Օզանը մտիկ կ'ընեն: Անոր նշանաւոր երգերէն են.

- «Իտէալիստներու շարժում», այս երգով Օզան Արիֆ ուղղակի վեր կ'առնէ «Իւլքիւճիւ» շարժումը,
- «Մեղք կ'ըլլայ հայրենիքին»,
- «Հրահանգիդ հնազանդ ենք»,
- «Աղրի հանրապետութիւն»:

Օզան Արիֆի անունը հայկական շրջանակին ծանօթ դարձաւ վերջերս, երբ անոր գրած ու յօրինած երգը՝ «Փլան մի՛ շինէր, փլա՛ն»ը երգեց թուրք երգիչ Իսմայիլ Թիւրիւթը, եւ յատկապէս այդ երգին համար անծանօթներու կողմէ պատրաստուեցաւ տեսահոլովակ մը, որ կը գովաբանէ հայ խմբագիր Հրանդ Տինքը սպաննած պատանին: Երգին մէջ կը ներկայացուի Հրանդ Տինքին դիակը եւ զայն սպաննած պատանին՝ թրքական դրօշակին առջեւ կանգնած այն միջոցին, երբ երգին բառերը կ'ըսեն. «Ան, որ հայրենիքը կը ծախէ, այդ վայրկեանին իսկ կը վերջանայ անոր գործը»:

Նշենք, որ Ազգայնական շարժում կուսակցութիւնը վերջերս կերպարանափոխելու որոնումին մէջ եւ ինքզինք համաշխարհայնացումին յարմարեցնելու գնով, 29 մարտ 2009-ին Թուրքիոյ մէջ տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններու նախօրեակին, իր կուսակցութեան անունով ճշդեց երկու հայեր՝ Լեւոն Աքչա եւ Խաչօ Քէշիշ, որոնք պիտի մասնակցէին վերոնշեալ ընտրութիւններուն:

Այնուհետեւ, Լեւոն Աքչա ընտրութիւններուն յաղթեց եւ ընտրուեցաւ Մերսինի նահանգի մէկ համայնքի քաղաքապետարանի խորհուրդին մաս կազմելով: Հետաքրքրական է Լեւոն Աքչայի ոչ թէ յաղթական դուրս գալը, այլ Ազգայնական շարժում կուսակցութենէն ըլլալը, ինչպէս է պարագան նաեւ պարտեալ թեկնածու Խաչօ Քէշիշին:

Երկու հայերու անդամակցութիւնը Ազգայնական շարժում կուսակցութեան բաւականին լուրջ զայրոյթ յառաջացուցած է թրքական միւս կուսակցութիւններուն համար, այն պատճառով, երբ Ազգայնական շարժում կուսակցութիւնը բուռն կերպով կը քննադատէ Հայաստան-Թուրքիա սահմաններու բացման ու մանաւանդ կը դաւանէ ազգայնական եւ ցեղապաշտ գաղափարախօսութիւնը:

Այս բոլորը կը կատարուին այն օրերուն, երբ Ազգայնական շարժում կուսակցութիւնը բուռն կերպով քննադատեց Հայաստան-Թուրքիա սահմաններու բացման հեռանկարին կապակցութեամբ եւ կուսակցութեան ղեկավար Տեւլէթ Պահչելի իր կարգին իր կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ժողովներէն մէկուն ընթացքին յայտնեց, որ «ոչ ոք կրնայ Հայաստանի հետ սահմանը բանալ, եթէ ցեղասպանութեան սուտին վրայ հիմնուած ամբաստանութիւններուն վերջ չտրուի, Լեռնային Ղարաբաղի շրջանը Ատրպէյճանի չվերադարձուի եւ Թուրքիայէն հողային պահանջները չդադրին»:

Պահչելի ըսաւ. «Կը զգուշացնեմ կառավարութիւնը. Հայաստանի շուրջ ձեր մօտեցումը կը վիրաւորէ մեր արժանապատուութիւնը: Հայաստանի նկատմամբ ձեր մօտեցումը նոյնքան յուսախաբութիւն կը պատճառէ եւ վարկաբեկիչ է, որքան յոյն կիպրացիներուն եւ Իրաքի ցեղապետներուն նկատմամբ մօտեցումը»:

Ազգայնական շարժում կուսակցութեան ղեկավարը նաեւ յայտարարեց, որ Թուրքիոյ նախագահին Երեւան այցելութեամբ Հայաստանի հետ սկսած յարաբերութեանց բնականոնացման գործընթացը միակողմանի զիջումներ կատարելու մակարդակին հասած է:

Միւս կողմէ, Հայոց ցեղասպանութեան 95-ամեակին առիթով, 24 ապրիլ 2010-ին Ստամպուլի մէջ տեղի ունեցան Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ոգեկոչումներ: Այս ոգեկոչումներուն, որպէս պատասխան, Թուրքիոյ մէջ ազգայնական շրջանակներու ներկայացուցիչները, յատկապէս Գորշ գայլերը սպառնացին սպաննել Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը ոգեկոչողներուն:

# ԱՄՆ-ի Կոնգրեսի «Սովորական սպառազինությունների մատակարարումները զարգացող աշխարհի երկրներին 2001-2008 թթ.» զեկույցը

Կարեն Վերանյան

*Սովորական սպառազինությունների համաշխարհային մատակարարումները*

2009 թ. սեպտեմբերին լույս տեսավ ԱՄՆ-ի Կոնգրեսի վերջին զեկույցը՝ նվիրված զարգացող աշխարհի երկրներին սովորական սպառազինությունների համաշխարհային մատակարարումների (Conventional Arms Transfers to Developing Nations) վիճակագրությանը: Զեկույցի գնահատականների համաձայն, թեև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի ազդեցություն է ունեցել ողջ աշխարհում զենքի վաճառքի ծավալների վրա, սակայն, ըստ էության, այդպես էլ չի խոչընդոտել 2008 թ. դրու-

թյամբ Միացյալ Նահանգների՝ որպես աշխարհում սպառազինությունների խոշորագույն մատակարարի դիրքերի ամրապնդման գործընթացին: 2008 թ. տվյալներով, պաշտոնական Վաշինգտոնը ընդհանուր առմամբ ստորագրել է սովորական սպառազինությունների մատակարարման վերաբերյալ շուրջ $37,8 միլիարդի պայմանագրեր, ինչը կազմում է այդ տարվա ընթացքում ողջ աշխարհում ստորագրված նման պայմանագրերի մեծ մասը՝ 68,4%-ը: Իսկ ինչ վերաբերում է 2007 թ. վիճակագրությանը, ապա համեմատության համար նշենք, որ այդ տարում ԱՄՆ-ի կողմից սպառազինությունների մատակարարման վերաբերյալ ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում էր ընդամենը $25,4 մլրդ.: Ընդ որում նկատենք, որ ողջ աշխարհում 2008 թ. սովորական սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված բոլոր պայմանագրերի (և՛ զարգացող, և՛ զարգացած աշխարհի երկրների հետ) ընդհանուր արժողությունը, ըստ զեկույցի փորձագետների տվյալների, գնահատվում էր շուրջ $55,2 մլրդ., ինչը 2007 թ. համապատասխան ցուցանիշի համեմատ մոտավորապես 7,6% անկում է արձանագրել:

2008 թ. դրությամբ սովորական սպառազինությունների համաշխարհային մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի (զարգացող ու զարգացած երկրների հետ) ընդհանուր արժեքի հաշվարկով Միացյալ Նահանգներին զգալի տարբերությամբ հաջորդում է Իտալիան, որի համապատասխան ցուցանիշը կազմում է ընդամենը $3,7 մլրդ., ինչը կազմում է ընդհանուր նմանատիպ պայմանագրերի շուրջ 6,7%-ը: Սովորական սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ձեռք բերված պայմանագրերի ընդհանուր արժողությամբ երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Ռուսաստանի Դաշնությունը՝ $3,5 մլրդ.: Ի դեպ, Միացյալ Նահանգների, Իտալիայի ու Ռուսաստանի կողմից ստորագրված նմանատիպ պայմանագրերի ընդհանուր հավաքական արժողությունը հասնում է 2008 թ. բոլոր մատակարար երկրների կողմից իրականացված նման գործարքների ճնշող մեծամասնությունը՝ 81,5%:



Գրաֆիկ 1. Սպառազինությունների համաշխարհային մատակարարումները 2001-2008 թթ., զարգացող և զարգացած աշխարհի համեմատականը, $մլրդ. (աղբյուրը՝ ԱՄՆ-ի կառավարություն)




*Սովորական սպառազինությունների մատակարարումները զարգացող աշխարհին*

Ինչ վերաբերում է զարգացող երկրների հետ 2008 թ. սովորական սպառազինությունների մատակարարումների շուրջ ձեռք բերված պայմանագրերին, ապա դրանց ընդհանուր արժեքը կազմում էր $42,2 մլրդ., ինչը գերազանցում էր 2007 թ. արձանագրված $41,1 մլրդ. արդյունքը:

Ըստ առաջատար մատակարար երկրների վիճակագրության, 2008 թ. դրությամբ զարգացող աշխարհի երկրների հետ Միացյալ Նահանգները ձեռք է բերել սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ շուրջ $29,6 միլիարդ ընդհանուր արժողության պայմանագրեր, ինչը գերազանցում է 2007 թ. ԱՄՆ-ի համապատասխան արդյունքը ($12,45 մլրդ.): 2008 թ. զարգացող աշխարհի հետ ԱՄՆ-ի կողմից ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է զարգացող աշխարհի երկրների հետ ձեռք բերված ողջ նմանատիպ պայմանագրերի 70,1%-ը, ինչը շուրջ 30,2% աճ է արձանագրել 2007 թ. համեմատությամբ Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա 2008 թ. դրությամբ վերջինս զարգացող աշխարհի երկրների հետ ստորագրել է նմանատիպ պայմանագրեր՝ $3,3 մլրդ. ընդհանուր արժողությամբ, ինչը 2007 թ. համապատասխան ցուցանիշի ($10,4 մլրդ.) համեմատությամբ զգալի ետընթաց է արձանագրել:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2008 թ. Միացյալ Նահանգների ու Ռուսաստանի կողմից զարգացող երկրների հետ սովորական սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերը միասին վերցրած կազմել են զարգացող երկրների հետ ձեռք բերված ընդհանուր պայմանագրերի կեսից ավելին՝ 59,6%-ը:

2005-2008 թթ. կտրվածքով զարգացող աշխարհի երկրների հետ սովորական սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի վիճակագրությունում առաջատար ցուցանիշով առանձնացել են Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանի Դաշնությունը: Մասնավորապես, նշյալ ժամանակաշրջանում Միացյալ Նահանգները ստորագրել է նման տեսակի պայմանագրեր՝ $56,3 միլիարդ ընդհանուր արժողությամբ, ինչը հաշվվում էր զարգացող աշխարհի երկրների հետ ձեռք բերված նմանատիպ պայմանագրերի շուրջ 36,7%-ը: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնությունը ստորագրել է նմանատիպ պայմանագրեր՝ շուրջ $35,5 մլրդ. ընդհանուր արժողությամբ՝ համապատասխանաբար կազմելով նմանատիպ պայմանագրերի 22,9%-ը: Իր բարձր ցուցանիշով Միացյալ Նահանգներին ու Ռուսաստանին հաջորդում է Մեծ Բրիտանիան, որը 2005-2008 թթ. կտրվածքով զարգացող երկրների հետ ձեռք է բերել սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ պայմանագրեր՝ $17,5 մլրդ. ընդհանուր արժողությամբ՝ համապատասխանաբար կազմելով զարգացող աշխարհի երկրների հետ ստորագրված ընդհանուր պայմանագրերի 11,4%-ը:



**Աղյուսակ 1.** Զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի արժեքը՝ ըստ մատակարար երկրների, 2001-2008 թթ., $մլն.

| **Մատակարար երկիր** | **2001** | **2002** | **2003** | **2004** | **2005** | **2006** | **2007** | **2008** | **2001-2008** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՄՆ | 6,291 | 8,357 | 5,902 | 6,969 | 4,618 | 8,765 | 12,090 | 29,612 | 82,604 |
| Ռուսաստան | 5,400 | 5,400 | 4,400 | 7,100 | 5,600 | 14,500 | 10,100 | 3,300 | 55,800 |
| Մեծ Բրիտանիա | 200 | 700 | 1,900 | 4,100 | 2,800 | 4,000 | 9,800 | 200 | 23,700 |
| Ֆրանսիա | 1,100 | 400 | 900 | 1,100 | 6,400 | 400 | 1,200 | 2,500 | 14,000 |
| Չինաստան | 1,100 | 400 | 600 | 1,000 | 2,600 | 1,400 | 1,300 | 800 | 9,200 |
| Իտալիա | 200 | 0 | 300 | 600 | 600 | 600 | 800 | 1,500 | 4,600 |
| Գերմանիա | 100 | 100 | 100 | 100 | 900 | 1,000 | 1,500 | 400 | 4,200 |
| Մնացյալ եվրոպ. երկրներ | 1,100 | 1,400 | 1,400 | 2,400 | 3,500 | 2,900 | 2,000 | 2,400 | 17,100 |
| Մնացյալ երկրներ | 1,600 | 1,000 | 1,200 | 2,600 | 1,300 | 3,300 | 1,300 | 1,500 | 13,800 |
| **Ընդհանուր** | **17,091** | **17,757** | **16,702** | **25,969** | **28,318** | **36,865** | **40,090** | **42,212** | **225,004** |

*Աղբյուրը՝ ԱՄՆ-ի կառավարություն:*

2005-2008 թթ. կտրվածքով զարգացող աշխարհի երկրների հետ սովորական սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի արժեքային ցուցանիշները տրված են ստորև պատկերված աղյուսակում՝ ըստ առաջատար մատակարար երկրների: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում Միացյալ Նահանգներից, Ռուսաստանից ու Մեծ Բրիտանիայից զատ, իրենց բարձր ցուցանիշներով առաջատար երկրների ցուցակում են ընդգրկվել այնպիսի եվրոպական երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան ու Իսպանիան: Մերձավորարևելյան պետություններից աղյուսակում իր հաստատուն դիրքով առանձնացել է Իսրայելը, իսկ հեռավորարևելյան երկրներից՝ Չինաստանը: Առաջատար երկրների ցուցակը ամփոփում է ևս մեկ հետխորհրդային պետություն՝ Ուկրաինան, որը զարգացող աշխարհի երկրների հետ նշված ժամանակահատվածում ստորագրել է նման տեսակի պայմանագրեր՝ $1,3 մլրդ. ընդհանուր արժողությամբ:

**Աղյուսակ 2.** Զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի արժեքը՝ ըստ մատակարար առաջատար երկրների, 2005-2008 թթ., $մլն.

| Երկրի դիրքը | Մատակարար երկիր | Պայմանագրերի արժեքը |
|---|---|---|
| 1 | ԱՄՆ | **56,300** |
| 2 | Ռուսաստան | **35,500** |
| 3 | Մեծ Բրիտանիա | **17,500** |
| 4 | Ֆրանսիա | **10,500** |
| 5 | Չինաստան | **6,100** |
| 6 | Գերմանիա | **3,800** |
| 7 | Իսրայել | **3,500** |
| 8 | Իտալիա | **3,500** |
| 9 | Իսպանիա | **2,100** |
| 10 | Շվեդիա | **1,600** |
| 11 | Ուկրաինա | **1,300** |

*Աղբյուրը՝ ԱՄՆ-ի կառավարություն:*

ԱՄՆ-ի Կոնգրեսի «Սովորական սպառազինությունների մատակարարումները զարգացող աշխարհի երկրներին 2001-2008 թթ.» զեկույցում տվյալներ են պարունակվում նաև այն երկրների վերաբերյալ, որոնք ստացել են համապատասխան սպառազինությունները մասնավորաբար 2005-2008 թթ. ժամանակահատվածում: Այդ վիճակագրությանը կարող ենք առավել հանգամանորեն ծանոթանալ աղյուսակ 3-ում պատկերված տեղեկատվությունից, որտեղ տվյալներ են ներկայացվում սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի արժեքային արդյունքների վերաբերյալ՝ ըստ ստացող առաջատար երկրների դասակարգման: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, 2005-2008 թթ. կտրվածքով սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի արժեքով, որպես ստացող պետություն, առաջատար դիրքեր են զբաղեցնում Սաուդյան Արաբիան, Հնդկաստանն ու Միացյալ Արաբական Էմիրությունները: Ցուցակում ներառված են նաև Պակիստանը, որի հետ ստորագրվել են $9,500 մլն. ընդհանուր արժողությամբ նմանատիպ պայմանագրեր, Վենեսուելան և Հարավային Կորեան՝ համապատասխանաբար $5,600 և $4,400 ցուցանիշներով:

**Աղյուսակ 3.** Զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ ստորագրված պայմանագրերի արժեքը՝ ըստ ստացող առաջատար երկրների, 2005-2008 թթ., $մլն.

| Երկրի դիրքը | Ստացող երկիր | Պայմանագրերի արժեքը |
|---|---|---|
| 1 | Սաուդյան Արաբիա | 28,300 |
| 2 | Հնդկաստան | 20,200 |
| 3 | Միացյալ Արաբ. Էմիր. | 12,800 |
| 4 | Պակիստան | 9,500 |
| 5 | Եգիպտոս | 6,200 |
| 6 | Վենեսուելա | 5,600 |
| 7 | Սիրիա | 5,200 |
| 8 | Մարոկկո | 5,000 |
| 9 | Ալժիր | 4,600 |
| 10 | Հարավային Կորեա | 4,400 |

*Աղբյուրը՝ ԱՄՆ-ի կառավարություն:*





Բավական հետաքրքիր վիճակագրական տվյալներ են ներկայացված նաև սովորական սպառազինությունների մատակարարումների վերաբերյալ՝ ըստ առանձին տարածաշրջանների և առաջատար մատակարար երկրների դասակարգման: Մասնավորապես 2005-2008 թթ. ժամանակահատվածում, ինչպես տրված է ստորև ներկայացվող աղյուսակում, սպառազինությունների մատակարարման վերաբերյալ ձեռք բերված պայմանագրերի արժեքով առանձնանում է առաջին հերթին Մերձավոր Արևելքը, որի հետ նշված ժամանակաշրջանում ստորագրվել են \$83,329 մլն. ընդհանուր արժողության պայմանագրեր: Ընդ որում, այս տարածաշրջանի հետ ձեռք բերված նմանատիպ պայմանագրերի ճնշող մեծամասնությունը իրականացվել է Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կողմից, որոնց համապատասխան ցուցանիշները միասին վերցրած կազմել են շուրջ \$69,300: Մերձավորարևելյան տարածաշրջանից զատ իր բարձր ցուցանիշներով առանձնացել է նաև Ասիան, որի հետ ստորագրվել են \$53,508 ընդհանուր արժողությամբ նման պայմանագրեր: Ասիական տարածաշրջանի հետ ձեռք բերված պայմանագրերի վիճակագրությունում իրենց բարձր ցուցանիշներով կրկին առանձնացել են Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը. ի դեպ, Ռուսաստանի ցուցանիշը գերազանցել է ԱՄՆ-ի արդյունքը՝ համապատասխանաբար \$16,000 և \$12,008 (մանրամասն տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.** Սղառազինությունների տարածաշրջանային մասակարարումների վերաբերյալ ձեռք բերված պայմանագրերը՝ ըստ մասակարար երկրների, 2005-2008 թթ., $մլն. (ամերիկյան դոլարի 2009 թ. տարեվերջի կուրսով)

| Մասակարար երկիր | Ասիա | Մերձավոր Արևելք | Լատինական Ամերիկա | Աֆրիկա |
|---|---|---|---|---|
| ԱՄՆ | 12,008 | 40,729 | 2,190 | 158 |
| Ռուսաստան | 16,000 | 12,900 | 4,300 | 400 |
| Ֆրանսիա | 7,300 | 4,700 | 200 | 800 |
| Մեծ Բրիտանիա | 500 | 15,600 | 700 | 0 |
| Չինաստան | 3,200 | 1,500 | 500 | 900 |
| Գերմանիա | 2,200 | 1,400 | 200 | 0 |
| Իտալիա | 1,400 | 1,700 | 100 | 300 |
| Մնացյալ եվրոպ. երկրներ | 6,200 | 3,700 | 2,500 | 600 |
| Մնացյալ երկրներ | 4,700 | 1,100 | 1,200 | 600 |
| Հիմնական արևմտաեվրոպ. երկրներ[1] | 11,400 | 23,400 | 1,200 | 1,100 |
| **Ընդհանուր** | **53,508** | **83,329** | **11,890** | **3,758** |

*Աղբյուրը՝ ԱՄՆ-ի կառավարություն*



[1] «Հիմնական արևմտաեվրոպական երկրներ» կատեգորիան ներառում է Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Իտալիան:

# Մի առասպելի անմեռ վկան

Արտաշես Շահբազյան

Ապարանի Արագած գյուղի հին գերեզմանատնից Խանասորի դաշտը չի երևում: Այնպես, ինչպես Ապարանի Արագած գյուղի հին գերեզմանատունը չի երևում Խանասորի դաշտից, և չի երևա, անգամ եթե դաշտի փեշը բռնած բարձրանաս Արաուլ լեռան գագաթը: Արագած գյուղի հին գերեզմանատնից, սակայն, հստակ երևում է փոքր Մասիսը, որն էլ իր ակնառու ներկայությամբ փաստում է թիկունքում՝ իրանական սահմանին մերձ, Արաուլ լեռան հովանու ներքո տարածված Խանասորի դաշտի մասին:

2010 թվականի մայիսի 22-ի կեսօրին, Արագածի հին գերեզմանատան այցելուները



Խանասորն այսօր



չխալվելու համար, մատներով շոշափելով, կրկին ու կրկին կարդում էին իրենց ներկայությանը անհաղորդ տապանաքարին փորագրված բառերը. «Աստ հանգչի Գրիգոր որդի Մկրտչի Ալեքսանդրապոլցի, նահատակվեցավ Խանասորի դեպքին 1902 թիվ»: Կուսակցական վավերագրերում Խանասորի քսան զոհերի թվում հիշատակվում է Գրիգորի անունը, որտեղից էլ իմանում ենք նրա ազգանունը՝ Լոռեցյան: Թեև սև, կարծր տուֆից տաշված, ոչ մեծ տապանաքարը, ըստ նույն քարտեղեն վկայագրության, շիրմատեղի վրա դրվել էր 1902 թվականին, փոքր Մասիսի և նրա թիկունքում գտնվող դաշտի չափ ակնհայտ էր, որ անթեղված մահկանացուն այն քսան նահատակներից մեկն է, որը 1897 թվականի հուլիսի 25-ին զոհվել էր Խանասորի կռվի ժամանակ: Նույն ինքը՝ Գրիգոր Լոռեցյանը, կամ հեղափոխական մյուս կեղծանվամբ՝ Պիղատոսը: Տապանաքարը շրջապատողները շոշափում էին սև շիրմաքարն այնպես, ինչպես կշոյեին 24 տարեկան Գրիգորի գանգուրները, և փորձում էին պատասխաններ գտնել մտքում իրար հրմշտող հարցերին. ո՞վ է եղել Գրիգոր Լոռեցյանը, գեղեցիկ ու վայելչակա՞զմ է եղել, թե՞ ոչ, ինչպե՞ս է միացել հայդուկային ամենամեծ խմբի արշավանքին և ինչպե՞ս է պատահել, որ Խանասորի կռվի նահատակը թաղվել է հենց այստեղ: «Ալեքսանդրապոլցի» մականունը ենթադրել էր տալիս Գրիգորի ծննդավայրի մասին:

Ի դեպ՝ այսօր էլ Գյումրիում Լոռեցյան ազգանունով ընտանիքներ կան:

Նահատակված հայդուկին եթե ցանկանային հայրական տուն հասցնել, ապա սայլը, դուրս գալով Պարսկաստանի տարածքից, կտրելով Ջուղան, Շարուրը, Արարատյան ու Շիրակի դաշտերը, լավագույն դեպքում չորս-հինգ օրից կհասներ Ալեքսանդրապոլ: Իրատեսական չէր լինի աճյունը այդքան օրեր ճանապարհի տանելը:

Գուցե վիրավոր մարտիկի վերջին կամքն է եղել հայրական օջախը տեսնելը: Շատ հարցերի պատասխաններ սակայն, հավանաբար, անհետ կորել են պատմության մշուշում: Թեև նույն ժլատ վավերագրերը հայտնում են, որ Գրիգորը հայր չի ունեցել, եղել է գրագետ, արհեստավոր, ամուրի, զինավարժ, հետևակ:

Երբ փորձում ես մտովի ուրվագծել Գրիգոր Ալեքսանդրապոլցու կերպարը, ապա նա այլ կերպ չի պատկերանում, քան բարձրահասակ, գեղեցիկ ու վայելչակազմ,չէ՞ որ հայրենիքի փրկությանը անմնացորդ ծառայելու նպատակը արդեն իսկ ընտրում է լավագույններին, իսկ իդեալը գեղեցկացնում ու վեհացնում է անհատին:

Պիղատոսը հավանաբար ամուսնացած չպիտի լիներ, քանի որ ֆիդայիները այդ ծանր բեռից ձգտում էին զերծ մնալ իրենք՝ և փորձության չենթարկել ուրիշների կյանքը:

Զարմանալի բան չկա, որ Ալեքսանդրապոլցին կարող էր հայտնվել ազգային հեղափոխական օջախներից մեկում, երբ հայրենիքի ազատագրության գաղափարը անգամ Ամերիկայից, Եվրոպայից և Ռուսական կայսրության հեռավոր ծագերից ձգում, իրեն էր քաշում հազարավոր հայորդիների, իսկ Խանասորի ձեռնարկը սովորականներից չէր: Հանդուգն ու արկածախնդրական այս ծրագիրը ամիսներ շարունակ ներքին քննարկումների թեմա էր դարձել, ալեկոծել դաշնակցական մթնոլորտը:

1896 թվականին, երկարատև բախումներից հետո Վանի թուրք կառավարիչները տեղի հայությանը հաշտություն են առաջարկում՝ պայմանով, որ հեղափոխականները լքեն Վանը: Որպես այս



Նիկոլ Դումանը իր խմբով 1904թ.

պայմանավորվածության երաշխավոր է հանդես գալիս Վանի անգլիական հյուպատոսը: Իհարկե, ինչքան թուրքական ազնիվ խոսքին կարելի էր (և է) հավատալ, նույնքան էլ վստահել եվրոպական երաշխավորությանը: Երբ արդեն հեղափոխականները մոտեցել էին պարսկական սահմանին, թուրքական իշխանության հրահրմամբ, քրդական Մազրիկ ցեղի դարանակալ հրոսակները հարձակում են գործում, կոտորում են դավին անտեղյակ դաշնակցականներին, հնչակյաններին և արմենականներին: Իր ծնունդով և գործունեությամբ Վանին կապված Արմենական կուսակցությունը հատկապես ստանում է կործանիչ հարված՝ կորցնելով մոտ 250 կուսակցականների: Ցնծում են թուրքերը, հրճվանք են ապրում քրդերը, ովքեր ունակ չէին հասկանալու, որ հայության հետ հաշիվները մաքրելուց հետո թուրքերի շոյող ձեռքը աքցան է դառնալու իրենց կոկորդին: Անակնկալ հարվածից հետո հայությանը պատել էր խոր հուսահատությունն ու հոռետեսությունը:

Այս ճնշող մթնոլորտում Ատրպատականում գործող դաշնակցական ղեկավարներից ղարաբաղցի Նիկոլ Դումանը առաջարկում է հակահարված տալ վայրենաբարո Մազրիկ ցեղին: Ընկերներն ու գործակիցները լուրջ չէին համարում Դումանի հիմնավորումները և նրա առաջարկը դիտում էին կռվից հետո բռունցքներ թափահարելու պես մի բան, որի մեջ ավելի շատ զգացմունք և կիրք կար: Էլ չասած առաջարկի արկածախնդրական բնույթի մասին՝ ինչ էր նշանակում ֆիդայիների ամենահոծ բազմությամբ անցնել թուրքական սահմանը, ամենուր վխտացող թուրքական կանոնավոր զորաջոկատներին և ավարառու քրդական խմբերին շրջանցելով իր որջի մեջ կռվի բռնվել վերջիններիս ռազմաշունչ ցեղախմբերից մեկի հետ:

Տարաձայնությունները սուր բնույթ են ստանում, որի պատճառով Դումանի դեմ տրամադրվում են կենտրոնական կոմիտեի մի քանի անդամներ և ուրիշներ:

Բայց Դումանը Դումանը չէր լինի, եթե ետ կանգներ մտադրությունից: Ի վերջո

հայտնվելով անելանելի վիճակում, հայդուկապետը գլխի ընկավ, թե ում աջակցությանը պիտի դիմեր: Բյուրոյի կենտրոնը Թիֆլիսում էր, Թիֆլիսում էր Դաշնակցություն կազմակերպության հսկա սարդոստայնի թելերը ձեռքում պահող Քրիստափորը: Դումանը գնաց Թիֆլիս, Քրիստափոր Միքայելյանին բացատրեց ծրագիրը և իր մտահղացմամբ այնպես վարակեց վերջինիս, որ այլևս նա դարձավ գաղափարի տերը: Հետո արդեն Քրիստափոր Միքայելյանն էր նամակներ հղելու Թավրիզ, թե՝ ընկերներ, «ինչո՞ւ չեք սկըսում, ասե՛ք ինչի կարիք կա և այլևս մի՛ պատճառաբանեք, թե եղանակները վատ են, ճանապարհները՝ անանցանելի...»: Իսկ մինչ այդ Բյուրոյի մեկ այլ անդամ՝ Հարություն Շահրիկյանը, եկավ Սալմաստ՝ անձամբ արշավանքի որոշումը փոխանցելու, ինչպես և հայտնելու, որ Դաշնակցության մինչ այժմ կազմակերպած ամենամեծ արշավանքը կգլխավորի ոչ այլ ոք, քան արշավանքի գաղափարին ակտիվորեն դեմ հանդես եկող, նույնպես ղարաբաղցի, Վանի գործիչ Վարդան Մեհրաբյանը (ապագայի Խանասորի Վարդանը): «Տեսնես ինչո՞ւ է այսպիսի թարս որոշում կայացվել»,- դեպքից 113 տարի անց խորհում էին իրադարձությունների համեստ մասնակիցներից մեկի՝ Գրիգոր Լոռեցյանի գերեզմանաքարը շրջապատած մարդիկ: Եվ կարծես Գրիգորը հուշեց 113-ամյա հարցի պատասխանը. «Ախր Դումանը լարված հարաբերությունների մեջ էր որոշ ընկերների և մասնավորապես ղեկավար մարմնի անդամների հետ: Արշավանքի ղեկավար նշանակվելու դեպքում դժվար էր լինելու նրա շուրջ բոլորին համախմբելն ու ընդհանուր գործի մղելը: Փոխարենը հենց ծրագրին դեմ հանդես եկողներից մեկին գործի պատասխանատու նշանակելը պիտի հակառակ ազդեցություն ունենար այս ճամբարում: Առաջին ու վերջին դեպքը չէր, երբ կուսակցական ղեկավարությունը բարդ խնդրի լուծումը պիտի գտներ կայացնելով անակնկալ ու ոչ ստանդարտ որոշում»:

Դումանն ընդամենը հիսնապետ էր, բայց ով ուներ նրա եռանդն ու վճռականությունը: Ըստ էության նա էլ մնաց գործի կազմակերպման ոգին ու կենտրոնական դեմքը: Որքան էլ, սակայն, ոգևորությամբ գործն առաջ տարվեր, վրա հասավ աշունը, ապա՝ ձմեռը, հետո գարունը եկավ, իսկ նախապատրաստական աշխատանքները դեռ ավարտված չէին, անիծված եղանակն էլ իր հերթին էր խոչընդոտում:

Վերջապես 1897 թվականի հուլիսի 25-ի վաղ առավոտյան Ղարաղաղ գյուղից դեպի սահման ձգվեց ֆիդայիների 200 հոգանոց հետևակ և 50 հոգանոց ձիավոր խումբը:

Սուրբ Արարատի խոժոռ հայացքի ներքո, Խանասորի կանաչ դաշտի և վառվռուն կակաչների վրա բշտիկների նման տարածվել էին քրդական գորշ վրանները: Դումանը վերջին պահին հասցրեց զգուշացնել. «Տղե՛րք, կանանց ու երեխեքին ձեռք չտա՛ք, մնացածին կոտորե՛ք անխնա»:

*Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը...*

Արնախում Շարաֆ բեկը հաջողեցրեց ճողոպրել միայն կնոջ շորերի մեջ թաքնվելով: Ճողոպրեց՝ դաշտում թողնելով 7-8 հարյուր ավարառուներին, որոնց բազմաթիվ ան-



Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցին

գամներ ներքաշել էր կեղտոտ գործերի ու անմեղ արյան մեղքի մեջ: Ոչնչացված հրոսակների դիմաց հայկական կողմն ունեցավ քսան հայրենապաշտների կորուստ:

Արդյունքում՝ Թուրքիան ցնցվեց, սուլթանական ռեժիմը հասկացավ, որ հայերը ոտքի են կանգնել և ունակ են ինքնապաշտպանության: Քրդերը հասկացան, որ հայկական վրեժը կարող է լինել ահարկու, բարեկամություն փնտրեցին դրկիցների հետ և երգեր ձոնեցին... հայ ֆիդայիներին: Խանասորի արշավանքի լուրը մարդկության ականջին հնչեց որպես ահազանգ Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցողի և այն մասին, որ հայերը, թքելով «քաղաքակիրթ» Եվրոպայի բարեհաճ միջնորդության վրա, որոշել են իրենք իրենց պաշտպանել: Հայությունը գլուխը բարձրացրեց և կրկին գոտեպնդվեց՝ կա այն ներքին ուժը, որ պաշտպան կկանգնի ազգին:

2010 թվականի մայիսի 22-ին երգիչ և երգահան Ժորա Գրիգորյանի հրավերով Երևանից չորս մարդ գնացել էին Ապարանի շրջանի Արագած գյուղ: Ժորա Գրիգորյանն էր Արագած գյուղի պատմությունը պրպտելիս հայտնաբերել անարդարորեն կորած գերեզմանը: Գերեզմանատան վրայով փչող մեղմ զեփյուռը հավաքվածների ականջին էր հասցնում սովետի հետ չհաշտըված տատ ու պապերի շրթներից պոկված երգը.

*Խունկով, մոմով գամ Խանասոր,*

*Արցունք թափեմ ես ամեն օր...*

Հյուրերը Ժորայի տանը, նրա զավակի ու ընկերոջ հետ խմեցին Գրիգոր Լոռեցյանի կենացը, և Գրիգորը, կարծես, կենդանացավ ու եկավ նստեց իրենց կողքին:

Հյուրերն ու հյուրընկալողները խմեցին Խանասորի, բոլոր ժամանակների հայ նահատակների կենացը, և նրանք բոլորը կենդանացան, եկան խռնվեցին սենյակում: Գրիգորը, Խանասորի և մնացած բոլոր հերոսները դեռ ապրելու են, անհայտ է, թե իրենց ինչքան է մնացել՝ խորհեցին հյուրընկալողներն ու Երևանից Գրիգոր Լոռեցյանի հետ հանդիպման եկած հյուրերը:



Խանասորի արշավախմբերից մեկը



# Ալիևյան ժառանգական բլեֆը

*Ռուբեն Հովսեփյան*

Սովետական գրականության հերթական օրերը Թուրքմենիայում էին: Հայաստանից հրավիրված էին Սիլվա Կապուտիկյանը և ես: Տոնական տրամադրությամբ համակված այդ օրերի բացմանը նախագահությունում, բնականաբար, տեղ էին հատկացրել հանրահայտ բանաստեղծուհուն, իսկ ինձ՝ դահլիճի առաջին շարքերում:

Ողջույնի խոսքում Սիլվա Կապուտիկյանը տեղեկացրեց, որ Հայաստանից իր հետ ժամանել է նաև երիտասարդ արձակագիր, տարիներ առաջ Թուրքմենիայում երկրաբան աշխատած Ռուբեն Հովսեփյանը, ով, ի դեպ, քսանվեց կոմիսարներից մեկի, Կարակումի ավազուտներում գնդակահարված Սուրեն Հովսեփյանի զարմիկն է:

Տպավորությունն այնքան ցնցող էր, որ տոնական օրերի փակման նիստում արդեն անհարմար կլիներ ինձ դահլիճի, թեկուզև, առաջին շարքում նստեցնելը: Բազմեցի նախագահությունում, ուղիղ Թուրքմենիայի Մինիստրների սովետի նախագահի կողքին: Եվ երբ ձայնը տրվեց Ադըրբեջանի պատվիրակ, չեմ հիշում որ գրողին, ով ի լուր աշխարհի հայտնեց, թե իր հանրապետությունն արդեն կատարել է բամբակի մթերման տարեկան պլանը, հարևանս բարեկամաբար և փոքր-ինչ դավադիր շշուկով ականջիս ասաց.

- Թուրքմենիայում գարունն ավելի շուտ է բացվում, ամառն ավելի շոգ է լինում: Ցանքսը մենք ավելի վաղ ենք սկսում, բամբակը մեզանում ավելի վաղ է հասունանում: Այս ինչպե՞ս եղավ, որ մենք դեռ նոր ենք սկսել բամբակահավաքը, իսկ նրանք արդեն կատարել են պլանը:

Նրա ականջին ես նույն բարեկամական ու փոքր-ինչ դավադիր շշուկով ասացի.

- «Широко шагает Азербайджан»:

Հեյդարալիևյան օրերն էին Ադրբեջանում, և ռուսատառ սույն կարգախոսը, որ



բարեբախտաբար չթարգմանվեց հայերեն և չպղծեց հայ գիրը, հնչում, ընթերցվում, ցուցադրվում, թերևս նաև երգվում էր ամենուր: Բոլորը գիտեին, որ նախորդ տարիներից «տնտեսված», պահուստային բամբակն էր մթերվել որպես ընթացիկ տարվա բերք, և այս անճպարարությունը առաջին անգամ չէր ներկայացվում ադրբեջանական պարզունակ քարոզչության բեմահարթակում: Թուրքմենիայի Մինիստրների սովետի նախագահն էլ գիտեր, թե ինչն ինչոց է, բայց այդ պահին նպատակահարմար էր զարմանք արտահայտելը և ոչ թե զայրույթ: Գիտեր, որ բլեֆ է:

Մեծ, սակայն անմեղ բլեֆ էր, որ ընդամենը հասունացնում էր Ադրբեջանի հանրապետության դրոշին Լենինի շքանշանի շուտափույթ ճանաչումը:

Հիմա Հեյդարի որդի Իլհամ Ալիևի օրերն են: Եվ նրա բլեֆը նույնպես մեծ է, սակայն այլևս անմեղ չէ: Նրա նպատակը Լենինի շքանշան ստանալը չէ. ինքը կարող է ավելի թանկարժեք շքանշաններ կտրել և շնորհել ում ասես, նույնիսկ Լենինին, անշուշտ՝ հետմահու: Նրա նպատակն է պատերազմի սպառնալիքով շահել այն ամենը, ինչ շահում են սովորաբար հաղթական պատերազմով: Այն էլ՝ ոչ միշտ: Եվ որպեսզի սպառնալիքը ներգործուն լինի, նա փչում է իր հզորության առայժմ փքվող փուչիկը, և որովհետև օդն ակնհայտորեն չի բավարարում նրա թոքերում, հայացքը աջ ու ձախ է գցում՝ «պահուստային» օդ ներմուծելու:



Պահուստային այդ օղը նա ակնկալում է նախ իր ժողովրդից և հետո՝ Թուրքիայից: Թուրքիայի անունը խոհեմաբար չի հիշատակվում նրա վերջին ճառում, թեև թուրքական ոճը քողարկելը գրեթե անհնար է, սակայն ադրբեջանական ժողովրդի «հավար կանչելու» SOS-ն արդեն ականջ է խլացնում:

Իլհամ Ալիևի ճառը միաժամանակ թե՛ սպառնալիք է Հայաստանին և Լեռնային Ղարաբաղի «տխրահռչակ անջատողականներին» և թե՛ մասնակցության ու հավանություն տալու կոչ՝ Ադրբեջանի ժողովրդին:

«Ադրբեջանական պետությունը և ադրբեջանական ժողովուրդը երբեք չեն տրամադրի մի այնպիսի կարգավիճակ Լեռնային Ղարաբաղին, ինչը կանջատի նրան Ադրբեջանից: Բանակցությունների քննարկվող հարցերում չկա և չի կարող լինել որևէ մեխանիզմ, որի միջոցով երբևիցե Լեռնային Ղարաբաղը կանջատվի Ադրբեջանից»:

Եվ կամ՝ «Պատերազմի առաջին փուլը ոչինչ չի ապացուցում: Ապացուցում է միայն մի բան. ադրբեջանական ժողովուրդը և Ադրբեջանի պետությունը երբեք չեն հաշտվի այս իրողության հետ և ցանկացած ճանապարհով կվերականգնեն իրենց տարածքային ամբողջականությունը»:

Ուշադրություն դարձրեք «ժողովուրդ» և «պետություն» բառերի տեղափոխության վրա: «Ժողովուրդն» առաջ է քաշվել, ավելի կարևորվել: Այդպես էլ պիտի լիներ. հո ի՞նքը չի ռազմաճակատ մեկնելու, երբ ռազմի փողը հնչի: Ժողովուրդն է արյուն թափելու: Եվ, ուրեմն, ժողովրդին է պետք դարձնել պահանջատեր, ժողովրդին է պետք դարձնել վրեժխնդիր, ժողովրդին է պետք զինել երբևիցե ստեղծված ամենաահարկու զենքով՝ ազգայնամոլությամբ: Ժողովրդին է պետք պատմական կտորվածքով հենց նոր թխված քարտեզով համոզել, որ հարևանդ, քեզանից թույլ, փոքր, քո թշնամի հայը հանդգնել է զավթել տարածքներդ և մենք, ուրեմն, վերականգնելով մեր երկրի ամբողջականությունը, արդար ենք ողջ աշխարհի ու Ալլահի առջև: «Երբ հայկական կողմը ասում է, որ Լեռնային Ղարաբաղը երբևիցե կդառնա անկախ, ապա դա իրենց երևակայությունն է, ցանկությունը, երազանքը: Եվ ուրիշ ոչինչ»,- հայտարարում է Իլհամ Ալիևը:

Մեկը լինի՝ հարցնի՝ նման հայտարարությունից հետո էլ ինչո՞ւ ես մասնակցում բանակցություններին: Այլևս ի՞նչ բանակցություններ: Բանակցությունները Լեռնային Ղարաբաղին կարգավիճակ տրամադրելու հարցի շուրջ են ընթանում: Մնացյալ հարցերը, որքան էլ դրանք կարևոր լինեն, երկրորդական են, հետևանքային: Բացառո՞ւմ ես կարգավիճակի շուրջ քննարկումները, վերանում է բանակցությունների բուն իմաստը, էությունը: Եվ այս տրամաբանությունը վերաբերում է նաև Հայաստանին: Թերևս, արդեն, ավելի շատ Հայաստանին:

Որքա՞ն կարելի է հանդուրժել ալիևյան ժառանգական բլեֆը:

№ 7—9 (213) XX ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

# ԼԵՀ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՄԱՍԻՆ

*Լեհաստանի երեք հատուածների ամենաազդեցիկ կուսակցութեան - P.P.S.-ի - կենտրոնական օրգանը, մի ընդարձակ յօդուածում, «Սոցիալիզմը Հայաստանի մէջ» վերնագրով, վերլուծում է Համագումարին ներկայացուած Կոպենհագի Միջազգային Հ.Յ.Դաշնակցութեան Տեղեկագիրը, իր կողմից աւելացնելով մի քանի մեկնութիւններ: Առաջ ենք բերում թարգմանաբար յօդուածի մի քանի կէտերը.*

*«Հայաստանը իր քաղաքական կացութեամբ նմանում է Լեհաստանին: Նա պատռուած ու բաժանուած է երեք պետութիւնների միջև և մշտնջենաւոր պայքարի մէջ պաշտպանում է իր ժողովրդական իրաւունքները: Մօտիկ անցեալում նա ապրեց յեղափոխութիւնը իր ռուսական հատուածում, իսկ վերջին ժամանակներս ահագին մասնակցութիւն ունի թիւրքական ու պարսկական յեղափոխութիւնների մէջ: Այսօր Ասիայի այդ երկրի համար - օսմանեան յեղաշրջումով - ծագել է իր սահմանադրական զարգացման արշալոյսը:*

*Հայաստանի բոլոր երեք հատուածնե-*




րի վրայ տարածում է իր գործունէութիւնը հայ սոցիալիստ կազմակերպութիւնը - «Դաշնակցութիւնը»: Նրա աշխատանքը բազմակողմանի է. նա միաժամանակ ղեկավարում է յեղափոխական, քաղաքական և սոցիալական շարժումները»:

Այս պատմելով «Դաշնակցութեան» կատարած դերը Թիւրքիայում ու Պարսկաստանում, նրա պրօպագանդը քրիստոնեաների ու մահմեդականների համերաշխութեան գործի համար, յօդուածագիրն անցնում է Ռուսաստան:

«Ամենքին յայտնի է «Դաշնակցութեան» արժէքը Ռուսաստանի յեղափոխական շարժումների մէջ: Այդտեղ նա հանդիսանում է «մի կարծր ընկոյզ» ռուս կառավարութեան համար, շնորհիւ իր գերազանց զինուորական կազմակերպութեան: Ցարիզմը հարկ տեսաւ հայկական պոգրոմներ սարքել թաթարների միջոցով, բայց «Դաշնակցութիւնը» աջողեց յետ մղել նրանց:

Ռուս յեղափոխութիւնից, թւում է, թէ միմիայն «Դաշնակցութիւն»ն է քաղել պարզ ու որոշ հրահանգ: Նա շատ լաւ է ըմբռնել, թէ ինչ վնասներ է հասցրել շարժման գործին կուսակցական երկպառակութիւնը և յանձին իր Ընդհանուր Ժողովի որոշել է ճիգ թափել՝ ուժերի միութիւն առաջ բերելու... «Դաշնակցութեան» Զեկուցագիրը քննադատում է և ռուս սոցիալիստների մեծամասնութեան տակտիկը, տնտեսական մեթոդի գերակշռումը, կրաւորական գործադուլները և յայտարարում է, որ անհրաժեշտ է զինւորել և զինավարժել մասսաները:

Կարդալով այդ կուսակցութեան գործունէութիւնն ու ծրագիրները երկրի երեք հատուածների մէջ, դուք տեսնում եք այնտեղ առողջ քաղաքական միտք, որ պարզ ըմբռնումն ունի կացութիւնների մասին և գիտէ նրանցից քաղել օգուտներ»:

# «Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը»




*«Նորավանք» գիտակրթական հիմնադրամը հրատարակել է Հայկարամ Նահապետյանի «Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը» աշխատությունը, որի կարիքը զգացվում էր վաղուց՝ Թուրքիայի և վերջերս նաև Ադրբեջանի արտասահմանյան կառույցների հակահայ ձեռնարկների ակտիվացման գործընթացին զուգահեռ: Տեղեկատվական հարուստ նյութ պարունակող այս ուսումնասիրության նպատակը մեր համապատասխան մարմինների և հասարակական ու գիտական ուժերի համախմբման անհրաժեշտության շեշտադրումն է և համահայկական բռունցքի ձևավորումը*

*Չխորանալով ուսումնասիրության մանրամասների մեջ, ցանկանում ենք մեր ընթերցողներին ներկայացնել գրքի ծրագրային՝ «Ամփոփում» կոչված վերջաբանը:*

# ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպիսի՞ն պետք է լինի հայկական կողմի առաջանքը:

Այս հարցի շուրջ գրքում մի շարք դիտարկումներ են եղել: Ըստ ամենայնի, նախ պետք է մեզ համար հստակ ամրագրենք, որ Բաքուն և Անկարան բավական հիմնավոր մոտեցում են որդեգրել հայկական Սփյուռքի հետ մրցակցելու առումով: Սա լինելու է երկարատև և համառ գործընթաց և Հայաստանին պարտադրում է, հաշվի նստելով իրողությունների հետ, մշակել համապատասխան ռազմավարություն: Մասնավորապես, նպատակահարմար է թվում արտերկրում գործող ՀՀ դեսպանատների, տեղի համայնքների և այլ խողովակների միջոցով իրականացնել արտասահմանում գործող թուրք-ադրբեջանական միությունների ակտիվ մոնիթորինգ, հետևել վերջիններիս կողմից հրատարակվող ԶԼՄ-ներին, ռադիո- կամ հեռուստաեթերին, մշակել համապատասխան տեղեկատվություն: Նաև աշխատանք տանել հայկական կողմի բարեկամ համայնքների հետ (ասորական, հունական, հույն-կիպրական, ռուսական, քրդական) հարաբերությունների մերձեցման և միացյալ հանդես գալու ուղղությամբ, ինչպես նաև աշխատել այլ համայնքային կառույցների հետ: Պետք է նկատել, որ այս ուղղությամբ որոշ աշխատանքներ տարվում են. Հայ դատի կառույցը և ԱՄՆ-ի Հայկական համագումարը գործընկերային հարաբերություններ ունեն հրեական, հունական, իռլանդական մի շարք միությունների հետ: Նպատակահարմար է թվում նաև հարցի հանդեպ պետական մոտեցումը: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կոալիցիան սատարել է Հայոց ցեղասպանության թիվ 252 բանաձևին, որը ներկայացնում է ԱՄՆ-ի 22 միլիոն քաղաքացիների և երկրի երկու տասնյակի չափ համայնքային միություններ:

Ինչպես թուրքական, այնպես էլ ադրբեջանական կողմի գործունեությունն անխուսափելիորեն կրում է և շարունակելու է կրել ապատեղեկատվության և մերժողականության տարրեր: Թե՛ Մեծ եղեռնի հարցում, թե՛ Խոջալուի դեպքերի կամ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում դա պարզապես անխուսափելի է: Մեկ օրինակ. Նիդեռլանդների www.azeriunited.com կայքէջում հրապարակված են մեջբերումներ հայ հրապարակախոս և գրող Զորի Բալայանի «Մեր հոգու վերածնունդը» գրքից, որում նկարագրվում են «հայկական կողմի բռնությունները ադրբեջանցիների հանդեպ»: Իրականում Զորի Բալայանը նման գիրք չի հրատարակել, և այս գրքի վերաբերյալ ամբողջ տեղեկատվական հոսքն ադրբեջանական կողմի սուտն է, որը տարածվում է ոչ միայն Ադրբեջանում, այլև Եվրոպայում լոբբիստական կառույցների միջոցով:

Նպատակահարմար է թվում այս կարգի մանրամասների բացահայտումը եվրոպական, ամերիկյան կամ այլ հասարակությունների առջև: Միաժամանակ, առկա է հնարավորություն աշխատելու մասնավորապես Եվրոպայի այն քաղաքական ուժերի հետ, որոնք տրամադրված են Եվրոպայում «թուրքական էքսպանսիայի» դեմ: Պետք է հստակեցնել, որ իրականում Եվրոպայի ադրբեջանական կառույցներն էլ «կոսմետիկ» տարբերություններ ունեն թուրքական միություններից, հիմքը նույնն է՝ «մեկ ազգ, երկու պետություն»: Թուրքական և ադրբեջանական համայնքային կառույցները տարեցտարի պարզապես սերտաճում են, և այս «համաթյուրքական ալյանսը» հեռանկարում կարող է «եվրոպական դիմադրության շարժման» մեջ ներքաշել նաև ադրբեջանական «սփյուռքը»: Որոշակի նշանակություն ունի նաև կրոնական գործոնը: Էմիր Քըրի խոսքով՝ «թուրքերն իսլամի հետ կապված իմիջի խնդիր ունեն, քանի որ արևմտյան մամուլում հաճախ է իսլամի թեմայով բացասական տեղեկատվություն սփռվում»: Պետկոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը ևս հարցազրույցներից մեկում նշել է, որ իսլամի գործոնը որոշակիորեն սահմանափակում է Ադրբեջանի լոբբիստական կարողությունները Եվրոպայում:

Այս ֆոնին Հայաստանի առաջին քրիստոնյա պետությունը լինելու հանգամանքը խոսուն փաստ է:

Այսքանով հանդերձ, հարևան երկրների մեքենայություններին ամենաազդեցիկ հակահարվածը կլինի Հայրենիքի և Սփյուռքի կապերի սերտացումը: Հայկական Սփյուռքի ներուժն առայսօր ամբողջապես բացահայտված չէ, բայց տարբեր գնահատումներով հանդերձ, ակնհայտ է, որ դրա իրական հնարավորությունների մեկ մասն է աշխատում հանուն Հայաստանի և Հայության:

Հայաստան-Սփյուռք միասնությունը մեր երկրի շարունակական զարգացման, Արցախի և Հայաստանի սահմանների անվտանգության, Սփյուռքի հայապահպանության, Հայ դատի արդարացի լուծման, մեր ինքնության և մեր ներուժի ամբողջականացման ամենաարդյունավետ ուղիներից է և ամբողջովին հիմնավորված բարոյական և պատմական բոլոր չափանիշներով...

# ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԵՆՑ





## 1910-1967

Հարություն Կալենցը ծնվել է **1910** թ. Օսմանյան կայսրության Սեբաստիա նահանգի Կյուրուն քաղաքում, Անիից գաղթած հայ ազնվականներ Խարմադայանների ընտանիքում:
**1915** թվականին՝ Հայոց Ցեղասպանության դժնդակ տարիներին, Կալենցը երկու եղբայրների հետ, անցնելով անապատի մահվան ճանապարհով, հրաշքով փրկվում է՝ հասնելով Հալեպ:
**1915-1922**թթ. - Հալեպի որբանոց:
**1923-1927**թթ. ապրում է Հալեպում, սկսում է լրջորեն զբաղվել արվեստով:
**1927-1930**թթ. տեղափոխվում է Տրիպոլի (Լիբանան), այստեղ ծանոթանում է ֆրանսիացի նկարիչ Կլոդ Միշլեի հետ, սկիզբ է առնում նրանց երկար տարիների ստեղծագործական ընկերությունը:
**1930 -1946**թթ. տեղափոխվում է Բեյրութ, որտեղ ապրում է ակտիվ ստեղծագործական կյանքով, բացում է անհատական ցուցահանդեսներ, ստեղծում է գեղարվեստական ստուդիա, ընդունում է աշակերտներ:
Ստեղծագործական կարիերայի կարևոր աստիճաններից էր **1939**թ. Նյու Յորքի համաշխարհային ցուցահանդեսում Լիբանանի տաղավարի յոթ մետրանոց հարթաքանդակային կոմպոզիցիան, որը արժանացավ ցուցահանդեսային հանձնաժողովի ու Լիբանանի կառավարության պատվոգրերին:
Եղել է «Արվեստի բարեկամների ընկերության» ստեղծման ակտիվ նախաձեռնողներից և նրա հիմքի վրա 1942թ. կազմավորված «Լիբանանի գեղանկարիչների միության» ակտիվ անդամներից մեկը:
**1946**թ. - Հայրենադարձություն Հայաստան, Նկարիչների միության անդամ:
**1949-1951**թթ. – Հեռացնում են Նկարիչների միությունից, մեղադրելով նրան ֆորմալիզմի ու կոսմոպոլիտիզմի մեջ:
**1961**թ.- Անհատական ցուցահանդես Մոսկվայում:
**1962**թ. - Անհատական ցուցահանդես Նկարիչների միությունում:
**1967**թ. - Մահացել է Երևանում:
**1967**թ. – Հետմահու արժանացել է Պետական մրցանակի:
**1971**թ. - Անհատական ցուցահանդեսներ Լենինգրադում եւ Մոսկվայում:
**2000**թ. -Հոբելյանական ցուցահանդես Երևանի նկարիչների միությունում:
**2010**թ.- Օգոստոսի 6-ից մինչև սեպտեմբերի 6-ը կկայանա նկարչի 100-ամյակին նվիրված ցուցահանդես ՀՀ Ազգային պատկերասրահում:



# ԴՐՕՇԱԿ

Պատկերասրահ







# ԴՐՕՇԱԿ



